

ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ ՊՈԼՍԻ ԿԵԴ. ԿՕՄԻՏԷԻ ՑՐՁԱՐԵՐԱԿԱՆԸ

(Տարածած կուից առջ, տաճկերէն լեզուով)

Քեզ ենք դիմում սրանով տաճիկ ժողովուրդ, և ոչ թէ այն պատճառով որ երկիւղ ենք կրում քեզանից, կամ այլ և այլ միտումներ ունենք. — ո՛չ մենք արհամարհանքով ենք նայում մահաւան երեսին, — քո կառավարութիւնն է մեզ այդ սովորները: Մենք դիմում ենք քեզ միայն մի նպատակով՝ յայտնելու քեզ, որ քո դէմ մենք ոչինչ չունենք: Դարերից ի վեր մեր հայրերը ու պապերն ապրում էին քեզ հետ հաշտ ու խաղաղ, ունենալով մի հայրենիք ու ընդհանուր նպատակներ: Սակայն այս վերջին ժամանակները, ոճիրներով ստեղծած քո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէս զի աւելի մեծ դիրքութեամբ լսեղէի և քեզ, և մեզ: Դու չհասկացար, ժողովուրդ, այս դիւական քաղաքականութիւնը և մեր եղբայրների արեան մէջ թաթախած՝ դու մեղսակից գտնեցար այդ զարեղի ոճրագործութեան: Բայց թող քաջ յայտնի ընի քեզ, որ մեր կուր ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան, դրա դէմ են կուում և քո լաւագոյն զաւակները, որոնք կառավարչական ներկայ ձևերում իրենց հանգստութիւնը միմիայն Բօսֆօրի սրընթաց ալիքների մէջ են գտնում: Մտածիր, ժողովուրդ, ով է քո թշնամին և ով քո բարեկամը:

Մ Ի Ա Ր Ա Տ Ա Ի Ո Ր Է Ք

Քո հարազատ զաւակներին անարգում են, հայ ժողովուրդ: Քո պաշտելի հերոսներին վատաբար քարեր են նետում...
Ո՛ւշ դարձուր, որպիսի՝ ներդաշնակութեամբ մեր ար-

տաքին և ներքին թշնամիները գործում են այսօր նոյն ոգուով նոյն դրդումներով, որպիսի՝ եռանդով ճգնում են նրանք նսեմացնել, անւանարկել հերոսական գործի հեղինակներին: Նրանց հօտար պետութիւնների ձեռքին գործիք՝ հրատարակեցին, նրանց հաւազակ, դրախտահարի ստոր անուններով կնքեցին, նրանց վերջապէս, քեզ թշնամի հռչակեցին, հայ ժողովուրդ, քո իրական շահերին մնասող, քեզ հետ ոչ մի անուշութիւն չունեցող, քեզ ամեն բանով օտար...

Դառն է, քստմենի է իրողութիւնը: Մարդիկ կուում են, ահուելի մահը աչքերնին առած՝ ծածանեցնում են ապստամբական դրօշակը, մարդիկ չը լուծած, առասպելական յանդգնութեամբ ահեղ անհաւասար ճակատամարտ են մղում, փայլուն անձնագոհութեամբ դիմում են դէպի կորստեան անդունդ՝ դէպի մուսլ բանտեր, դէպի անողորմ, դժոխային ասնջանքներ, դէպի արիւնոտ կանաչան... մարդիկ պատրաստ են կրել այդ բոլորը, — իսկ նրանց պարսաւում են, ստորացնում, նրանց հռչակում են ազգամբաստներ, ֆանատիկոս աւազակներ, Անգլիայի, Ռուսիայի լրտեսներ, ազգային դատի դաւաճաններ...

Ազգային դատի դաւաճան... Սակայն ով է այդ դատի պաշտպանը, ովքեր են նրա ամենապերճախօս փատարանները, նրան մշտապէս զարկ տուողները: Եթէ հայկական յեղափոխութիւնը հայկական դատին թշնամի է, հապա դո՛ք էք պաշտպան, եսամոլ դիպլոմատներ, կամ դու, բուրժուական, վաճառած մամուլ:

Եթէ յեղափոխական բամբը չորոտար, եթէ Պոլիսը անիշխանութեան չմատնէր, արդեօք մի ըրպէս, գէթ մի վայրկեան պիտի մտածէ՞իք, որ հայն էլ դատ ունի, որ նա ևս ձգտում է մարդավայել կացութեան. արդեօք հայկական չարատանջ հարցը պիտի հանդէս գա՞ր...

Հայ ժողովուրդը շատ յուսաց, շատ լաց եղաւ ու հառաչեց: Մեր եղբայրների, մեր սբազած մայրերի ու քոյրերի դառն մորմարները դարեր է, որ հնչում են Տաճկահայաստանի արիւնոտ խորքերից, դարեր է, որ բռնակալը հնձում է մեր լաւագոյն ուժերը, իր դիւական մեքենայով սարսափ ու արհաւիրք է սփում մեր բազմատանջ հայրենիքում:

Եւ այդ բոլորը քո յանցաւոր աչքերի առաջ, անգով Քաղաքակրթութիւն:

Ի՞նչ արեցիր: Պարեն թափիր—ազատենք—անա-
 դորոյն դէպիլը քարոզեցիր դու սկզբու: Յուզած,
 թշուառութեան գագաթնակէտին հասած մարտիրոս ժո-
 ղովուրդը բողոքեց սխտեմաբար, իր բովանդակ հայրե-
 նիքը արեան գետերով ոռոգեց, աղիողորմ գանգատ-
 ներ հնչեցնելով, արինաքամ եղաւ...

Տեսար, լռեցիր... Բերանդ փակ մնաց, ձեռքերդ ծա-
 ւած, լեզուդ պապանձւած: Թողիր, որ գազանը անպա-
 տիժ կերպով պատուոտէ իր զոհին, թողիր, որ հայ
 մարտիրոսների դիակները ծածկեն հայոց շէնքերն ու
 քաղաքները, դաշտերն ու ձորերը... Թողիր այդ բոլո-
 րը, Եւրոպայ, և քո յանցաւոր անտարբերութեամբ խրա-
 խուսեցիր բռնակալին՝ առաջ տանելու իր սխրագործու-
 թիւնները... Այո, դուք՝ լուսաւոր աշխարհի բռնաւոր
 ներկայացուցիչներ, դուք աւելի արինաբբու եղաք, քան
 Ելզըզ-Քէօշքի արինաբբու վագրը:

Ո՛ր մնացին ձեր սրբազան աւանդութիւնները,
 ո՛ր ձեր յեղբայրսիրութեան, յմարդասիրութեան՝
 մեծահնչուն քարոզները... Ձեր պապերը, ձեր նախնիք-
 ները սովորեցրին մեզ ապստամբել և բռնութեամբ
 կործանել բռնաւորի լուծը, նրանք աւանդեցին մեզ
 հայրենասիրութեան, ազատութեան վեհ գաղափարնե-
 րը, իսկ դուք, անարժան յաջորդներդ, դատապարտու
 էք այսօր մի բուռն ժողովրդի յեղափոխական քայլերը
 և արամազրեան շանթեր էք արձակում այն անձնէք
 հերոսների դէմ, որոնք սառնասիրտ կերպով չեն կա-
 րող նայել արեան և արտասուքի անվերջ ովկեանին...

Ո՛չ պաշտօնական ժանգոտած Եւրոպայ, օգնութիւն
 սպասելու չէ քեզից. մեր յոյսը, մեր ապաւենը դար-
 ձեալ նոյն յեղափոխութիւնն է, նոյն յեղափոխական-
 ները, որոնց անգթաբար անարգեցիք՝ դու և քեզ
 խնկարկու գրչածախ մամուլը, որոնց դուք այնքան ստոր
 ու կեղտոտ ածականներով կնքեցիք...

Հեռու, անարժան, վաճառուած մամուլ, դնա՛ դու ըս-
 տորութեամբ քծնիր ուսական դեսպօտիզմի առաջ,
 դնա՛ դու խուճկ ծխիր համաշխարհային բռնապետներին,
 քո ստոր քննադատութիւնից վեր է, բարձր է հայ
 յեղափոխականը: Հեռու՛ դուք բոլոր անկոչ քննադատ-
 ներ, հայ և օտարազգի ուխտագրութենք, չափաւորու-
 թեան, խաղաղ առաջադիմութեան մեծախօս ասպետ-
 ներ, հեռու՛ ձեր զազրելի յիշոցներով, ձեր ստոր ինսի-
 նուանցիաներով... մեր Բաբկէնների, մեր Սուրէնների,
 Գնունիների, Միսաքեանների, մեր հարիւրաւոր նահա-
 տակ հերոսների ուրականները սպառնում են ձեզ
 իրենց թարմ շիրիմներից... հեռու՛. յեղափոխական Սուրբ
 Տաճարի շէմբում դուք կայան չունիք: Թափեցէ՛ք որ-
 քան կուզէ՛ք, կոկորդիլոսի արցունքներ, ճաւեցէ՛ք, որ-
 քան կուզէ՛ք, հայկական դատի անուկով, սակայն մի
 անարգեցէ՛ք, մի՛ արատաւորէ՛ք յեղափոխականի անու-
 նը. նա բարձր է, վսեմ, նա միշտ կը լինի բարձր, նւի-
 րական, և միշտ կը լինի նա հայ բազմաչարչար ամբու-

լի հարազատ ծնունդ, նրանից անբաժան, նրա Սուրբ
 Դատին զօրաւոր նեցուկ:

Իսկ դուք բոլորդ էլ օտար էք նրան և պիտի մնաք
 օտար:

Ե Ր Օ Շ Ա Կ

(ԱՄԱՂՆՆԻ, ԳՆՈՒՅՈՒՆ ԵՆ ՍՈՒՐԵՆԻ ԵՐՇԱՏԱՆՈՒ)

«Անցորդ, լուս տար Սպարտացոց,
 որ մենք բոլոր ընկանք այստեղ, հայ-
 րենիքի օրէնքներն շաւատարիմ մնա-
 լով...»

Իմ աչքերիս առաջ կանգնած են երեք անձնաւորու-
 թիւն, նրանք այլևս չկան—մեռած են. նոցա սուերն
 է այդ նոցա ուրականը. կանգնած են աչքերիս առաջ և
 ինձ հանգիստ չեն տալիս—հալածում են: Աշխատում
 եմ մոռանալ. աշխատում եմ մի ուրիշ բանի մասին
 մտածել, բայց ի՛ զուր. նոքա հետս են ու հետս, և
 հաւատացած եմ, որ միայն ես չեմ, որ այդ մեռած
 սուերների հալածանքի առարկան եմ:

Ո՛վ են դրանք, որ իրենց յաւիտենական հանգիստը
 թողած՝ ապրողներիս հոգեկան խաղաղութիւնն են խան-
 դարում. ի՞նչ են ուզում, ի՞նչ...

Լարում եմ ուշադրութիւնս, կրկնապատկում եմ
 աչքերիս ոյժը ու գրգռած աչքերովս տարօրինակ,
 անսովոր փոփոխութիւն եմ տեսնում այդ ինձ լաւ
 ծանօթ դէմքերի մէջ: Ահա Բաբկէն-Սիւնին—նա է,
 ես այդ լաւ եմ տեսնում—բայց նա ամբողջ չի, նրա
 մի մասն է այդ... նրա մարմնիկտորները Օտոման բանկի
 սրահում են դէս ու դէն ցիրուցան եղած: Ի՞նչ է այդ,
 մտածում եմ ինքս ինձ—«Ազատութիւն» հասնում է
 ականջիս մի ինչ որ աներևոյթ ձայն և ես պարզ որոշ
 տեսնում եմ, թէ ինչպէս Բաբկէն-Սիւնին ուղբերը
 ձեռքին «Ազատութիւն» պոռալով, Օտոման բանին է
 մտնում... ինչպէս նա այրած, խորոված թոքերով իր
 նպատակին համարեա թէ հասած՝ սանդուխների ա-
 ռաջ ծունկ է չորում և ապա մի վայրկեան ևս ու
 նրա մարմնի կտորները ուղբի պայթուցից պիտի դէս
 ու դէն շարուեն... Ա՛հ... Բաբկէնը հայ ազգի անգաս-
 տանի վրայ... Այս ի՞նչ տարօրինակ սերմ է, որ նա
 սերմանեց հայ երիտասարդութեան, հայ ժողովրդի սրտի
 մէջ և մի՞թէ այդ սերմը ապառաժ քարի վրայ է ըն-
 կած—և մի՞թէ սրանից յետոյ ևս Բաբկէնները հազ-
 ւագիւտ պիտի լինին, ինչպէս եղական էր Պոլսի վերա-
 բերմամբ ինքը Բաբկէնը...


Բայց սոքա ո՞վ են, այս երկուսը: Սամաթիացիք սը-
 րանց արևույն են երգում, սրանց քաջութեանը զար-
 մանում:—Երբ առիւծացած Գնունին պատուհանին էր
 մօտենում ու գլուխը թափահարելով ահարկու ձայ-

նով անէծքներ թափում տաճիկ բռնակալութեան դէմ— պաշարողները սարսափահար անկիւններն էին քաշուած: Ո՛չ մի եւրոպացի չէր մտածում այդ ժամանակ առիւծներին օգնութեան դնալու... 18 ժամ անընդհատ 4-5 հոգով Սամաթիան պաշտպանեցին, ամբողջ տաճիկ բանակին դէմ կանգնեցին, հարիւրաւոր աւաղակներ «խաղաղութեան» բերին ու Եւրոպան անիծելով՝ իրենց կեանքին վերջ դրին: Մեռնելու էին գնացել— մեռան, բայց թէ ի՛նչպէս. մեռան դիւցապին վայել մահով:

Երբ ամեն ինչ սպառեցաւ և ոչ մի միջոց չէր մնացել կուրծ շարունակելու, մէկը... թոյն ընդունեց, միւսը՝ բէվոլէրի վերջին գնդակը իր բերանն ուղղեց... մի փոքր թոյն ու ժանգոտած փամփուշտ— հա թէ ի՛նչ է մնում հայ յեղափոխականին, հայ ժողովուրդ...

Ձեմ կարող շարունակել. աչքերս մթնում են, հոգիս խաւարում. Բարկէն, Գնունի, Սուրէն, Սուրէն, Գնունի, Բարկէն... ամեն մէկը իր տարբեր մահով անընդհատ աչքիս առջևն են: «Ազատութիւն» կը պոռան սառը գերեզմանից. «Գործ» կը շշնջեն նրանց փակ բերանները...

Թող այդ նւիրական «Գործը» արձագանք գտնի մատաղ հայ սրտերում, թող հայ հերոսների այդ երեք ներկայացուցիչների յիշատակը հայ յեղափոխականներին նորանոր անձնուրաց գործերի առաջնորդէ, թող այդ անունները ոգևորեն նոցա, որոնք ընդունակ են ոգևորելու... Նոքա սուրբ են, նւիրական են այժմ մեզ համար...



Ս Ա Մ Ա Թ Ի Ա Ց Ի Ն Ե Ր Ո Ւ Զ Ե Ր Ո Ս Ա Կ Ա Ն Կ Ռ Ի Ի Ը

Նկա՛ւ վերջապէս օգոստոս 14-ը: 2օրեքշաբթին լուսացաւ. օդը գեղեցիկ և մեղմ էր, մեղմ էին և դէմքերը ու գեղեցիկ՝ հոգիները: Ամենքնիս ալ լուսաբացին կազմ ու պատրաստ էինք. ոգևորութիւնը ընդհանուր էր բոլոր ընկերների մէջ կուտելու մարմանը, մանաւանդ ուռմբերու փրկարար արդիւնքը շուտով վայելելու անհուն տենչը՝ գրգռիչ և վառվառն. գրութեան մէջ էր ձգած տղերանց արամադրութիւնը:

Ինչպէս Պոլոս շատ մը կէտերը, Սամաթիան ալ լաւ պատրաստութիւն էր տեսած: Ռազմական ծրագիր մը կազմեած էր, որը եթէ յաջողէր ի գլուխ հանել հիւանալի արդիւնք ձեռք բերելու էինք: 2օրեքշաբթի օրը ժամը 6-ին, ըստ թ. մեր գործը սկսւելու էր: Որքան անհամբերութեամբ երևակայութիւնը յուզող այդ ժամուն կսպասէինք: Մինչև երեքշաբթի երեկոյ մեծ քանակութեամբ ուռմբեր, 154 կոոր, ամեն տեսակէն, ցրած էին արդէն այն զանազան տեղերը, որոնք գործի պահուն նշանաւոր դեր խաղալու էին:

Քանի մը ահաբեկիչներ զինւած լաւ զէնքերով, փամփուշտներու մեծ պաշարով որոշած ժամուն՝ (6-ին) յարձակելու էին տեղական զօրանոցի վրայ, որը բաւական մեծակ և հաստատուն շէնք մ'է: Սպաննելով զօրքերէն մի քանիսին, նրանք վախճելու և ապաստանելու էին այն կէտի վրայ, որու շրջակայքի տուներու մէջ նախապէս ամեն տեսակ ուղղամթերքներով զինւած արիասիրտ երիտասարդներ սպասողական դիրքի մէջ մնալու էին, այնպէս որ երբ մեր տէրրօրիսաները կը մտնէին այդ կարևոր կեդրոնի վրայ՝ նրանք խիստ դիւրութեամբ կարող կը լինէին այդ տուներու մէջ ապաստանիլ ու աղատիլ. մինչդեռ զօրանոցի ամբողջ զօրքերը և ուրիշ պահականոցներէ հասած ոստիկանական ամբոխը մեր տէրրօրիսաները ձերբակալելու համար զանոնք հետապնդելով պիտի հասնէր նոյն կեդրոնի վրայ. այդ պահուն մեր աւերիչ, դժոխային մեքենաները, մեր ուռմբերը պատուհաններէն փողոց նետուելով, պիտի ջարդուփշուր ընէին և կոտորէին Համիտի սիրելի և անձնէր զօրքերը: Երբ աստի՛ն Սամաթիոյ գլխաւոր զինւորական ոյժը կը ջխջխալէր, անդին շատ մը ընկերներ եկեղեցին հաւաքուելու էին, ուր կամաց-կամաց պիտի կեդրոնանային մնացած մեր բոլոր ուժերը:

Բայց անսպասելի արգելքներ եկան խանգարեցին ծրագրի ոգին:

Գիւղին մէջ տիրող ոգևորութիւնը զգալի էր, շարժումը շատ: Շատ մը ընտանիքներ իմանալով կամ կասկածելով, կանուխէն փախած էին Ս. Ստեփանոյի կողմերը: Սոյն անխոհեմ քայլը պատճառ եղած էր կառավարութեանը վաղուց ունեցած կասկածը հաստատելու: Անմիջապէս ոստիկանութիւնը սկսաւ ամեն դի շօջիլ փողոցներու մէջ:

Ժամը 2-ին ձերբակալութիւն ժ'եղաւ Սամաթիոյ մէջ. սեւ սուեր մը անցաւ փայլուն արևու վրայէն:

Խստութիւնները շատացան. գիւղը ամբողջովն պաշարման վիճակի մէջ էր. փողոցներու անկիւնները բռնւած էին:

Մեր ընկերները այդ միջոցին հաւաքուած էին Միսաքեաններու տունը, դեռ շատ կանուխ լինելուն անգամ մը ևս ժողոված էին միասին. երբ յանկարծ զիրենք պաշարուած տեսան: Գնունին կը փնտռէին, իր տանը տէրը ձերբակալուած էր արդէն: Գժար կը լինէր այդ պահուն մեր ընկերներու զգացած կատաղութիւնը նկարագրել: Մի՞թէ այդքան շուտ: Որքան զօհորութիւններ եղած էին, ի՛նչ յոյսեր գգւած էին ու դե՛ռ քիչ առաջ կարող էին իրագործել իրենց փափագը ու հասնել նպատակուն, բայց առիւծները փակած էին վանդակին մէջ, չէին կարող դիւրաւ դուրս ելլել. սակայն սպասեցէք. դուք սիւնը քորնե՛ր, Համիդ: օնպաշի ծառաները, սպասեցէք. քիչ մ'ալ, դուք կը տեսնէք թէ այդ բանտարկւածները ինչպէս ձեզի կը հասկացնեն: Թէ ի՛նչ կը նշանակէ իրենց փայփայած ու սիրած ծրագրեր խանգարել. դուք պիտի շուտով զգաք թէ ձեր գործը առիւծների, հերոսների հետ է, որոնք կարող կը լինեն ձեզի և դեռ ձեզպէս շատերին ջարդել. փշթել. բնաջինջ ընել...

Ժամը 3-ը եկած էր:

Պաշարողները սկսան բանակցիլ. Գնունին կը խօսէր նրանց հետ: Առաջարկէին անձնատուր լինել— «ժամի

6-ին, կը պատասխանէին մերոնք:

Այս կտրուկ պատասխանին մէջ կար մի խորին իմաստ, սպանակական և հեզնական: Ժամը 6-ին սկսելու էր ամբողջ Պոլսոյ դաշնակցականներու ճակատամարտը ու մեր ընկերները կը ծաղոէին զիրենք պաշարող զօրքերը: Սպասելով որ կռիւը ամեն տեղ սկսի, որ իրենք էլ ցոյց տան շուտով իրենց ահագին ոյժը:

«Ժամը 6-ին միայն անձնատուր կը լլանք» կը կրկնէր Գնունին միշտ:

Տղայոց պաշարման վիճակի մէջ մնալը զիս յուսահատութեան կը տանէր, պէտք էր անպատճառ նրանց հետ բանակցութեան մտնել, բայց այդ ինչպէ՞ս ընել. իմ կանգնած տեղս ալ կամաց-կամաց զինւորները պաշարած էին, այնպէս որ մնացած էի շրջանակի մը մէջ, ուրիշ դուրս ելլելու համար հարկաւոր էր զօրքերի շարքերը կտրել ու անցնել: Մտեցայ բարձրաստիճան պաշտօնեայի մը, խնդրեցի, որ զիս ոստիկաններու միջոցաւ ամբոխի միջէն հանէ, շուտով կատարեցաւ իմ այս փափագը: Պաշտօնեան հրամայեց քանի մը զինւորներու, որ զիս առաջնորդեն և ի հարկին պաշտպանեն: Երբ հասայ ծանօթ անձի մը տանը մօտ, քովիներս հեռացնելէ ետքը, մնայ ներս: Այս տանը վերին յարկերէն կարելի էր բանակցիլ Միսաքեաններու տունը գտնուող տղերանց հետ, ինչ որ յաջողեցայ անմիջապէս: Սուրէնը յայտնեց իրենց դրութիւնը. պաշարուած էր կարող այդպիսիներին երբէք թուլացնել. եղածը եղած էր, պէտք էին շատ սուղը ծախել իրենց կեանքերը. կ'իմացնէր որ բոլորն ալ մեռնելու պատրաստ են, թէ պիտի կուին մինչև վերջին գնդակը և վերջին ուժը, թէ ոչ մէկերնին անձնատուր լինելու չէր երբէք:

Բայց կուզէին Անդրոնական Կոմիտէին նախօրօք տեղեկացնել իրենց պաշարուած դրութեան մասին: Սուրէնը յանձնարարեց ինձի, շուտով մեկնիլ և պատասխան մ'ալ բերել թէ միւս կողմերի ընկերները ինչ ջուրի վրայ են: Հարցը լուրջ էր. անհրաժեշտ էր Անդրոնական Կոմիտէին անմիջապէս իրաց վիճակի և տղայոց նպատակի նկատմամբ լուր հաղորդել որպէսզի ընդհանուր ծրագիրը փոքր անգոյշ ու լուրջ թեւ մը վրէժնալի:

Հրաժեշտ տալով ընկերներուս, որը վերջին անգամը լինելու էր՝ ես շտապեցի իմ պաշտօնը յաջող կերպով կատարել:

Անդրոնը զիս ապահովեց, որ գործերը լաւ-կարգին էին ամեն տեղ և որոշած ժամուն պայթելու էր կռիւը: Ժամանակը մօտ էր:

Անդրաբաձայ կրկին գիւղ. բայց ճանապարհի վրայ յուզումը արդէն նշմարեցի. ձիաւոր թղթատարներու արագ-արագ երթուկը զգալի էր. տեղ-տեղ խմբակներ կը նկատէի, շուտով սկսած էր, երևի Սամաթիոյ պաշարման լուրը տարածուել էր մինչև այդ կողմերը: Հեծեալները և զօրքերը գիւղին մէջ շտապել էին. խտուածիւնները չափազանցուած, երթուկը թուլացած:

Ժամը 5-ն էր: Տուններու դռները արդէն գոցուած էին: Վարժարանը պաշարուած էր: Հոն ալ կասկածանքի տակ էր ընկած:

Ժամը 6 1/2-ն էր:

Յանկարծ ահագին գողգուժներ, սարսափիչ որոտումներ լուիլ սկսան: Տղերք վերջապէս իրենց իրէական հասել էին. ուժերը կատաղութեամբ կը նետէին:

Ամբողջ գիւղը սարսուռի մէջ էր. գետինը կը սարսէր, օդը գոռ ու գոչի մէջ էր:

Կարմիր տէրրօրը սկսած էր:

Սարսափը մեծ էր. իրարու ետևէ ուժերը այլևայլ տեղերէ կը նետուէին փողոցը և կը կոտորէին զօրքերը: Սպանակները շատ էին: Պաշարողներու կողմանէ անդադար և կատաղի հրացանաձգութիւն կար տուններու վրայ, մասնաւորապէս Միսաքեաններու տանը և մանչերու վարժարանին վրայ:

Առաջին ուժերը կին մը նետեց թշնամիին գլխուն, կին մը, որը հակառակ իր տարիքին, ցոյց տուաւ զօրքերուն թէ՛ հայ կիներն ալ գիտէ հայրենիքի սուրբ դատին համար կուիլ ու զենք շարժեր:

Օրինակը քաջալերական էր. ընկերները բարոյապէս աւելի ուժովցած, առատօրէն կը գործածէին հրաշագործ ուժերը:

Այդ միջոցին փոխադարձ յարձակում տեղի ունեցաւ. մինչդեռ մեր քաջերէն քանի մը հոգիներ զօրանոցի վրայ խուժելով՝ ատրճանակներով կրակ կընէին պահպաններու վրայ ու խոյս կուտային, անդին՝ զօրքերը թուով աւելի ուժովցած, նոր յարձակում մը կընէին մանչերու վարժարանին վրայ ու անամթաքար ետ կը մղէին, շատ զօհներ թողնելով փողոցին մէջ:

Շփոթը, սուկումը անկարագրելի էր:

Հայեր փախչող փախչողի էին, բայց անգիտակից դրութեան մէջ, առանց ուր վազելնին գիտնալու: Տուներէն դուս ելլելով խոյս կուտային, թէ պատահաբար փողոցը գտնուելով յանկարծակի եկած էին՝ այդ կէտը մտած է ինձ. միակ այս լաւ գիտեմ, որ ջարդելու խիստ հրաման տրուեցաւ:

Խառնակութիւնը աւելի ծանր կերպարանք ստացաւ. փախչողները շուտով անխուսափելի մահը կը գտնէին... Վատ հոգի՛ զինւորներ, որ միայն լաւ գիտեն անգէն ժողովուրդը սպաննել:

Արդէն ամբողջ գիւղը կրակի մէջ էր:

Փողոցներու մէջ ծուխը լեցած, օդը միշտ որոտման մէջ. արհաւիրք և սարսափ, դժոխացուցած էին Սամաթիան:

Ժամը 12-ն էր: Կռիւը դադարեցաւ:

Մեծ դժւարութեամբ՝ բաւական ժամանակէ վերջը յաջողեցայ վարժարանի մէջ գտնուող ընկերներու հետ բանակցիլ: Տղերք շատ ուրախ տրամադրութեան մէջ էին. դեռ բնաւ իրենցմէ զոհ տուած չէին: Ծիծաղով կը պատմէին ինձի, թէ ինչպէս կոտորած էին զինւորները. թշնամին շատ զօհներ տուած էր: Կը խնդրէին, որ փամփուշտ հասցնեմ իրենց, որովհետև ունեցածնին առատօրէն գործածած էին: Բայց ինձ անկարելի էր դոհացում տալ ընկերներուս այդ պահանջին, ուստի յաջողութիւն մտղթելէ ետքը իրենցմէ բաժնեցայ...

Խորին լուրթիւն մը յաջորդած էր: Երկու կողմանէ ալ պատրաստութիւններ կը տեսնէին: Մերոնք դիրքերը կամրացնէին, ռազմավարները, ատրճանակները անմիջական գործածութեան մը տրամադրելութեան մէջ կը դնէին: Թշնամին նոր ուժերով աւելի զօրացած էր: Գիշերային լուրթեան մէջ կը լսէին երբեմն ընդհատ կերպով աղմուկներ, հրահանգներ կը տրուէին տաճիկ խումբերուն:

Ժամը 4-ին կռիւը յանկարծ նորէն սկսաւ. սակայն մեր տղերքը երևի պաշարնին խնայելու դիտաւորու-

Թեամբ, քանի մը ուումբեր նետելով բաւականացան, անկէ վերջը պաշտպանողական դիրք բռնել սկսան:

Շատ չտեւեց այս երկրորդ յարձակումը. զօրքերը երբ տեսան, որ իրենց կրակին պատասխանող չէր լիներ, դադրեցուցին շուտով իրենց ապարդիւն հրացանաձգութիւնը:

Երկրորդ դադար. դարձեալ խոր լուռութիւն: Ար կարծէի թէ ամեն բան վերջացած էր, երբ յանկարծ ժամ 7-ի ատենները սոսկալի՛ որոտումներ լսելով ընդոստ արթնցայ. քիչ մը քնած էի, եթէ կարելի էր քնել այդպիսի ժամուն...

Առիւր նորէն վերսկսած էր. կռիւ մը, որ վերջինը եղաւ: Թէև շատ մը մանրամասնութիւններ յետոյ իմացայ, բայց պիտի ջանամ դէպքերը իրենց ժամանակին պատմելու, իբր ականատես:

Նախ վարժարանին վրայ յարձակեցան. բաւական լաւ դիմադրութիւն ցոյց տրւեցաւ, սակայն թշնամուն ոյժը անհամեմատ կերպով մեծ էր, այնպէս որ շնորհիւ իրենց ունեցած կացիներու, որով հանդիպած արգելքները կը խորտակէին, քիչ վերջը յաջողեցան դռնէն ներս խուժել և տղերքը փնտռել:— Հոն սպաննեցին Սողոմոնը, որ շարունակ արիաբար կուած էր: Մարդասպանները ոտքերէն կապելով քաշքշելով մինչև փողոցը հանեցին: Մինչդեռ ներս վազող զօրքերուն մէկ մասը խեղճ Սողոմոնով զբաղւած էր, ուրիշներ՝ վարժարանին սենեակներուն մէջ վեր ու վար, ամեն դին, որսը ձեռքէն փախցնող որսորդին պէս՝ խելագարի նման տղերքը կը փնտռէին. ասոնք մնացած երկուքը, պատուհանէ մը վար ցատկեցին, որոնցմէ մէկը յաջողեցաւ հրաշքով ազատիլ այդ զօրքերու բազմութեան մէջէն: Իսկ միւսը անմիջապէս տեղն ու տեղը սպաննեցին:

Երբ վարժարանի մէջ սոյն տրամը տեղի կունենար, այնտեղ Միսաքեաններու տունը սրտաձմիկ տեսարան մը կը ներկայացնէր:

Տղերք հաւաքւած էին. իրարու ջերմ ու սրտադին հրատեչտի համբողներ առատորէն փոխանակելէ վերջը, անմիջապէս գործի սկսելով, ունեցած ամբող ուժերնին կը հաշւէին: Գեռ զոհ մը չէին տւած: Աեց հոգի էին. Գնունին, Սուրէնը, 2 Միսաքեան եղբայրները, մայրերնին և ինծի անծանօթ մէկը: Ամենէն էական հարցը ուղղամտեղքներու խնայողական գործածութիւնն էր. կարող էին դիմադրել մինչև իրենց պաշարի սպառումը. բայց լաւ չէր, որ քանի մը ժամ անելի կուէին: Արդէն բոլորն ալ քաջ ըմբռնած էին, թէ շատ ապրելու չէին, սակայն և այնպէս երգեցին մաքառիլ մինչև վերջ և յեղափոխականի մը արժանի մահովը միայն մեռնիլ: Աւ այդ իմաստով ճառեր խօսեցան, ոգեւորիչ և սարսուճն: Գնունին սկսաւ և Սուրէնը վերջացուց: Սուրէնի վերջին բառերն եղան— «Ուրեմն մեռնի՛ւք, եղբայրներ»:

Սկսաւ կատաղի, հերոսական կռիւր:

Յանկարծ պատերազմական փողերու ձայնը լսեցաւ, այս ձայնը խառնելով ուումբերու և հրացաններու հանած որոտընդոստ աղմուկին հետ, ահեղ սպաւորութիւն կը ներշնչէին երկզտին, խանդ ու եռանդ կրուողին:

Արշալոյսը սկսած էր. մթութիւնը կամաց-կամաց տեղի կուտար լուսոյ առաջ: Գիշերւան հետ միասին կաներեւութանային սեւ-սեւ մտածումները...

Լուսացած էր: Տղերք նոր ոգի առած՝ կը շարունակէին կռիւր, բայց հասած էր ճղնաժամը... վայրկեան մը ունեցած յոյսերնին շուտով մարեցաւ:

Զօրքերը, որ անհատնելի կերևային, միշտ նոր ուժերով ամբանալով, յանկարծ գազանացած կատաղի կերպով յարձակեցան տանը վրայ. այս անգամ յաջողեցան դռները կոտրել և ահա ամբողջ ներս խուժեց: 3 տղերք կսպաննէին, բայց երկուքը կը մնան տակաւին ողբ:

Առիւ չէ այլևս, ճակատամարտ է:

Սուրէն և Գնունին դեռ կը մաքառին. կզգան որ վսեմ վայրկեանը մօտեցած է. բայց քանի մը հոգիներ ալ կուզեն սպաննել: Նոր հարւածներ, նոր զոհեր:

Վերջապէս, ալ գիմադրութիւնը անկարելի լինելով, փոխանակ անձնատուր լինելու, իրենց ձեռքերով վերջ կը դնեն կեանքերնուն:

Զօրքերու այդ վայրկեանին բռնած դիրքը դիւրահասկանալի է: Զարդել, փշրել ամեն կողմ, կողպտել, աւարել ամեն բան:

Գիւղի վիճակը հինգշաբթի առաւօտ խիստ տխուր էր: Տունները թալանւած, կործանւած, բնտանիքներ ալ ջարդւած էին: Արորուստը աւելի նիւթական էր:

Մեծ թւով ձերբակալութիւններ տեղի ունեցան, որոնց մէջ տեսայ, պահականոցի առջևէն անցած միջոցիս Միսաքեանց մայրը և իր հիւանդ քոյրը, որոնք նոր բերւած էին հոն. շատ մը ծանօթներ նկատելով այդ տեղը, առանց արգելքի ներս մտայ բակը, ուր ժողովւած էին 50-ի չափ խեղճ կիներ: Հետերնին բաւական խօսելէ ետքը, մեծ դժւարութեամբ դուրս կրցայ պրծիլ:

Մամթեան այրիացած էր. գրեթէ աւերակ դարձած: Մեր ընկերներէն շատերը պատերազմի դաշտին վրայ մեռած էին, 18 ժամ կուելէ վերջը:

Արուցիւք սիրելի ընկերներ, բայց ցոյց տւինք թէ գիտնք կուելով մեռնիլ:

Զորեքշաբթին փառաւոր և նշանաւոր օր մ'եղաւ. առաջին անգամ ըլլալով, հայ յեղափոխականը ուժով դուրս եկաւ և զարմացուց ու ահաբեկեց ոչ միայն Ելզըզ-Քէօշքի բռնապետը, այլ ամբողջ քաղաքակիրթ Եւրոպան:

Դուք, հայրենիքի զոհեր, դուք, սիրելի ընկերներ, դուք ձեր մահով մեզի կտակեցիք ազատութեան սերը, հայրենիքի և հայրենակիցների համար անձնազոհ լինելու սուրբ զգացումը:

Դուք ընկաք կուռ դաշտի մէջ՝ ձեր գաղափարի պաշտպանութեանը համար:

Հայ յեղափոխականներ, հայութեան դուք մարտիրոսներ, դուք հասկացած էիք, որ ներկայ կուռ ելքէն է կախւած ձեր եղբայրներու, հայրենակիցներու փրկութիւնը: Դուք զգացած էիք, որ չորեքշաբթին մի մեծ, վսեմ օր լինելու է, ուր ցոյց տալու էիք շուտով, դուրս պոռթկալով յանկարծ, ոգի, եռանդ, քաջութիւն, նյժ, տոկունութիւն և հերոսութիւն: Այո՛, դուք լաւ գիտէիք, որ կռիւր լինելու էր կատաղի, անհաւասար, կը նախազգայիք, որ մեռնելու էք այդ օրը, բայց չը վարանեցաք վայրկեան մը: Դուք սիրով նետուեցաք այդ վտանգաւոր գործին մէջ, խմեցիք մահուան դառը բաժակը, առանց տրտունջի, սրտի անհուն գոհանակու-

Թեամբ դուք կատարեցիք ձեր պարտքը դէպի Հայրենիքը, Հայրենակիցները, մարդկուծիւնը և դէպի ընկերները:

Ազատութեան սիրոյ Համար, դուք մարտնչողներ, երջանիկ էք դուք: Դուք անձնուրացներ, չորիքշարժիի անձնազոհներ, անմուսնայի էք դուք:

Իսկ դու ալ, Հայ ժողովուրդ, ուրախ եղիր, որ այս տեսակ հերոսներու ծնունդ տւիր: Նոր չէ՛, որ Հայերը, քու որդիքդ, իրենց Հայրենիքի Համար կը մեռնին: Պատուութիւնը զարգարած է Հայ քաջերի գործքերով, բայց ժամանակը անցած է, եղանակները և միջոցները փոխուած են, Հայրենիքը աւելի պահանջոտ դարձած է, նոր հերոսներու, նոր անձնուրացներու պէտք ունի. մեծ գործիչներ յղացիր. ուրեմն:

Դու շատ օպասեցիր, շատ Համբերեցիր, բայց Հասաւ ասպարէզ գալու օրը: Այս օրը, Հայ ժողովուրդ, քո ճակատագրական թոպէներէն մէկն է, կուելու ես լարուած ուժերով, ձեռք-ձեռքի տուած Հայ յեղափոխականի հետ, քու հարազատ որդիքներուդ հետ, դուքս ե՛լ հրապարակ, խփիր դու ալ թշնամիի գլխուն և ցոյց տուր, թէ կան քո մէջը այնքան բարոյական ու կենսական ոյժ, որ այս պատմական թոպէին, ուրիշ կախուած է ասպարհ, դու, երեկայ ստրուկը, կարող կը լինիս կուել ճակատ առ ճակատ թշնամու հետ:

Պոլիս՝ օգոստոս 14-ով ցոյց տուա թէ Հայրենիքը կարող է դեռ վստահիլ իր յեղափոխականներու վրայ. Սամաթիոյ հերոսական կռիւլ մի փայլուն օրինակ է ամենուն Համար:

Անցե՛ն ուրեմն Սամաթիոյ հերոսները...

Թ Ի Ի Ր Բ Ի Ո Յ Ե Ո Ի Ր Զ Ը

«Ասոնք, որոնք յուսահատած են, կըսէ մեծ քաղաքագետ մը, ուրիշին անձին տէրն են»: Անշուշտ այն անձներուն, որոնք այդ յուսահատութեան պատճառն են: Մենք ուրեմն լիակատար իրաւունք ունինք սուլթանին կառավարութեան վրայ:

Հերիք է՛ն այսքան տառապանքներ, հերիք չէ՞ այսքան արիւն: Դեռ լսե՛նք, որ Երուզակ աւազակապետը վազրի անխղճութեամբ խռկայ մեր նահանակ եղբայրներու գերեզմանին քով և կոծողով ու կենդանութիւնով վնասը կաշտը ազգ մը խողովողի տիեզերքի ամենէն խուճուճ, ամենէն զազրելի կառավարութեան մը ձեռքով:

Ձէ՛, համբերութիւնը վերջակէտ մը ունի, և արդարութիւնը, իր վիճուք:

Աչքի առջև կը բերենք մեր դժբախտ հայրենիքը, որ հայրութեան անհուն գերեզմանն էր, թրքական միջին և արաբիկ ընտանիք, ուր մեր նրիտասարդութեան ծաղիկը կամրեցաւ, մեր ողբերը, այրիները, որոնք արցունքով կը մնանին, սարսուռ մը կանցնի մեր վրայէն: Այդ սարսուռն է մեր մուսան:

Մեր դէժ ունինք կառավարութիւն մը, որուն մէջ կը պակսի կըզոճի, բարոյականութեան և հոգիի մեծութեան զգացումը:

Ինչով կըմանք խօսք հասկցնել ատոր, որուն միակ սկզբունքն է քանդել ու աւերել:--Լալիկ, սորկանալիկ:--Այդ ամենը կատարեցինք, մինչև իսկ մեր արժանապատուութիւնը նոսնակել ճիւղով: Եւ սակայն զազմը չէր կասնք մեր սիրուն ազգը ընտանիք ընելէ:

Դրաց այս վիճակը չէր կարող յաւիտական աւելի:

Օր մ՛ալ յանկարծ, լալկան հայ ժողովուրդը սրբեց իր արցունքները: Այդ օրէն է վեր պլելու շարասաւեր, այլ արիւնով կը գծէ իր ազատութեան ծածրան: Մեկիս իր թափած արցունքի կաթիլներէն և արեան շիթերէն ուռմանը պատրաստեց: Օգոստոս 14-ի օրը հայրութեան չորրորդ և վերջինըութեան գերագոյն արտայայտութիւնն էր: Այդ օրը միայն թշնամին սկսաւ մոտանալ:

Երբզայն մինչև այդ ժամանակ Պերլէնի Դաշնագիրը բարձին տակ դարձ կը մրսփէր: Ռուսներու ծայրը սթափեցող գնորդ և Օսմանի մեծագոր կայսրութիւնը ծաթոսեցաւ ամեն կողմէ:

Արդարութիւնն ալ իր քմահաճոյքը ունի: Հայկական ուժանակները ոչ միայն զարդեցին Պուլսը, այլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը: Երբզայն շատ դիւրաւ չի պիտի մոռանայ պատմական այդ եզակի ուժը:

Անգլիա զայրոյթի եւ բողոքի մարմնացումն եղած է այսօր սուլթանի ապականած կառավարութեան դէմ: Գաղափար մը ունենալու համար անգլիոյ ժողովրդական շարժումին վրայ հարկէ, կըսէ թողութիւնը մը, աչքով տեսնել: Ժողովուրդ մը կըբէք մարդկութեան դնտին համար այդքան առաջ զագած չէ: Պահպանողական մասնուլը ազատականին կընկերանայ իրենց ժողովուրդին զայրոյթի ծնը և անոր հոգեկէ բռնող գծութեան ծայր տիեզերքի վրայ ցրելու համար: Լծնտծնէ մինչև յետին գիւղերու մէջ միթիւններ կը կազմէին, ուր կատմանիօսեն ամենէն պերճախօս անձնաւորութիւններ: Այդ քուրք արդարութիւն գոչող գլուխներու միջէն, Կլատուզոն, հակառակ իր քաղմամայ կենսքին, բեմ կը բարձրանայ կրկին եւ սովորական վեր ու պատկառելի շեշտով կը շատագոյն մարդկային սկզբունքները «Իրաւ է թէ, կըսէ Մեծ-Ժերուսիմ, մեր բողոքը քրեստոնէից պաշտպանութեան համար է, բայց Նոյն համակրութեան ծայրը պիտի բարձրացնենք, եթէ անոնց տեղ ըլլային մահմուտական հնդիկ, պոտոտայական, կամ կոմիլիկեան»:

Պուլկարիան ոչինչ է Հայաստանի անյուր սարսակներու քով կը ծայնէ ազգերու ազատարարը, եւ թելով սուլթանի լքելութիւնները, նենգամտութիւնները անոր ճակատին կը զարնէ, իր յաւիտական դատակնիք «Մեծ-Մարդասպան» անշնչիկ տիտղոսը:

Կլատուզոնի ծայրը իսկոյն արձագանք գտաւ աշխարհի ամեն կողմ, ուր արդէն մարտիրոս Հայաստանի հառաչներն ու սարսակի սրտածմլիկ լուրերը հասած էին:

Փրանսական ազատական եւ քարեկնից լրագիրները կը գնահատեն Կլատուզոնի ծայրը: «Ընթրանսիճան» անւանելով Կլատուզոնը «ազգերու ազատամար» և Մեծ մարդասպան կը յարձակն ֆրանսական կառավարութեան վրայ: «Աւա՛ռ, կըսէ ազատական թերթը, Ֆրանսայի համար դիցազնական դարը անցած է եւ փորձողութեան դարը եկած: Ղեկ տեղութիւնները անփոյթ կըբաղով կը դիտեն վայրագ Ապրիլ-Համիդի սպանութիւնները: Փրանսական կառավարութիւնը աւելին կընէ, կը քաշակուէ գանոնք և վերջերս խորհուրդ կընէր գիտնալու համար թէ, Մարսիլիա ազատամարտ անգրեկ հայերը պէ՛տք էր սուլթանին յանձնել»:

Փրանսայի մէջ մարդասիրական շարժումը ստատ է: Կարգ մը աղտոտ ու վարձկան թերթեր, ինչպէս «Թան» ու «Տէպա», որոնք ցեխին մէջ ինկած մէկ փողը լեզուով վերցնելու անամթութեանը ունին, կը շնորհակալ լինեն ժողովուրդին համակրանքը: Այդ նենգ ու շահախիտ երեւոյթը կը տեսնուի նաեւ գերմանական եւ արտերիական հրէայ թերթերուն մէջ:

Բրիտանական կառավարութիւնը իր ժողովուրդին բուն հոսանքին պռշի շարժում կաշխատի, եթէ ոչ կասեցնել, գոնէ մեղմացնել զայն: Կըյուսացի թէ Մալաթի, աշխարհի քաղաքային ամենայն բարձր ժողովուրդ մը կամքին առջև խնամարկելով վերջ պիտի տայ Հայաստանի մէջ կատարուած զարհուրելի տրամաբեռ շարքին:

Սուլթանը իր շարիքները արդարացնելու համար, աշխարհի մէջ ուր ու ոճիքներ, եղեռնագործութիւններ գործելը են օրինակ կը բերէ, ըսելով թէ միայն իր ժողովուրդը չէ, որ այդ տեսակ ընթացքի մէջ կը գտնուի:

Իսկ հայ յեղափոխականներուն վարկը կոտորելու համար միմուտութեան կը դիմէ անմահ սուլթանը: Կը շահայ համագիլ Ռուսիան, թէ հայերն ոչնչակամներ են, Ֆրանսայի թէ անհշտանականներ են, իսկ կը յորդորէ Անգլիան, որպէսզի գոնշահայ հայերէն, որոնք իր թէ Իրլանտայի դաւադիրներուն հետ համախոհ են: «Հայ յեղափոխականները, կը կակազէ փտած Բ. Դուռը, եղեռնագործներու հսկայ ընկերութիւն մ'են աշխարհի ամեն կողմը տարածուած, որ արաբիկ թշնամի է Եւրոպայի բոլոր կամսաւոր կառավարութիւններուն. ասոնք մեծազգային ուժանակ, ուսմը շինող ընկերակցութեան մէկ մասը կը կազմեն»:

«Սթանտարտ» առաջնորդողի մը մէջ պատասխանելով սուլթանի այդ շարժման հարցին կըսէ «Թիւնսի դաւադրութեան յայտնուելու Թիւրքիոյ նմանատիպութեան զործիք մ'եղաւ, որով կը շահայ աշխարհի առջև ինչպէսք արդարութեան տիպար ներկայացնել: Բայց սուլթանի այդ ինքնաշարժութիւնը յիմարական է: Զէ տեսնուած, որ իրանացի մը ուսմը նետելով անգլիական քաղաքի մը մէջ իրանացիները շարժած ըլլան. Բրիտանական ոստիկանութիւնը այդ միջոցին չը դիմեց քնն. ընդհակառակը, աշխատեցաւ իրանական ժողովուրդին վիճակը բարելաւել, արդար օրէնքնի սաստատելով: Սուլթանը շատ լաւ գիտէ ստիկա»:

Իսկ Գերման-Չեխոսիական թերթ մը խիստհամակրական յուսածի մը մէջ պախարակելով դիւանագիտութեան անտարբերութիւնը, իր զարմանքը եւ վրոյթմունքը կը յայտնէ այն բոլոր եւրոպական թերթերուն, որոնք կը դատապարտեն հայ յեղափոխականներն ընթացքը: Իրաւացի են արդեօք այդ մեղադրանքները, կը բացակայէ լրագիրը, նկարագրելով հայերուն դարաւոր հաւածանքը, որ այդպիսի

յուսահատ եւ անօգնական կացութեան դիմաց հայերը դաւադրութիւն ու սարքեր սուլածանի դէմ: Նոյն ժամապարհով չե՞նք ընթացեալ ըրող ժողովուրդները. արդեօք Կոստանի ժողովուրդը, Կարիպալտին եւ Երեմիայի նոյն ընդհանուր դաւադրութեան միջոցով չէ՞ր, որ յաղթանակեցին եւ ձեռք բերին անկախութիւնս:

Երբ Անգլիա վրէժ կը գրուայ, երբ միջին-միջին կիւր կը գուժարի, սուլածանը կը ծիծաղի, խօսքը կը թռչի կըտէ, ու առաջ կը տանի իր հայրենի գործը: Խօսքերէ գլուխնիս ուռեցաւ: Մեր դիակներուն պիտի շնորհէ մեր կենդանութեան իրաւունքները: Թող չը գարծանայ ուրեմ Ներսիսի, թէ մենք ի՞նչ միջոցներով մեր դատը ստաշ կը մղենք:

Անգլիոյ համազգային շարժումը կարծես չի համարձակիր Մանըք անցնի: Եւրոպական ցամաքին վրայ սիրուն Զեհեցիքն է, որ եր փորքիկ, այլ փեմ՝ ձայնը կը բարձրացնէ շարասնիչ ժողովուրդի մը դատին համար: Փրանսական կաշտակուէլ «Թան» թերթը երբ կը ծաղրէր Անգլիոյ, մանաւանդ Զեհեցիի զազային ցոյցերը, Վիեննա՝ թէ՛ ինչ ազատասէր գաւալները կը պատասխանէին՝ «Մենք գիտենք, թէ քաղաքականապէս մեծ ազգ մը չկնք եւ մեծ ազդեցութիւն չունինք, բայց երբ կարգը մարդասիրութեան կուգայ, ուրիշ իրատիւ պէտք չունենք: Մարդասիրութիւնը երկրի ծաւալէն կախում չունի: Մենք մեզ կը նկատենք մարդկային մեծ ընտանիքին մէկ մասը եւ իրաւունք ունենք մեր ձայնը բարձրացնել այդ ընտանիքին տառապող ժողովուրդներուն ի նպաստ»:

Քաղցրիկ Զեհեցիի այդ ինքնաբերական եւ անկեղծ համակիր արտայայտութիւնը պաշտօնի կընէ այդ երկրին սնունը, որ այնքան մտնի է ամեն հայու րտի:

Միև երկրը, որ սար համակրութիւն ցոյց կուտայ հայկական դատին, Կոստանի է, ուր Կարիպալտի շունչը մեզա կանոնաւոր կը պահէ աւելնով եւ հրայրքով լի հոտալացիները: Անգլիոյ օրինակին նետուելով հոս ալ կը կազմակերպուին ահագին միջիններ ուր կըսկոտ ճառեր կարդաստանին եւ լուսանքներ կուղղեն Միծ-Մարդասպան հասցէին:

Ուսուցիչ թագաւորը խորապէս կը շահագրգռի Անգլիոյ մարդասիրական շարժումն եւ իր սքանչաշունչ կը յայտնէ: Կատարածի կրօնի եւ վիճի ոգուն եւ յոյս կը յայտնէ, թէ ընդհուպ նպաստաւոր լուծում մը կանանայ արեւելեան հարցը:

Կոստանի հսկածը կանան շարժման ոգին է, Կոստանի դիւցազնին Կարիպալտի տղան ճէնէրալՄոնթիի Կարիպալտի, որ նախագահն է կազմակերպած յանձնակիցին:

Իմաստասէր Գերմանիոյ մէջ ալ սկսած է հայասէր շարժում մը, բայց կառավարութիւնը ծիգի կընէ խեղճիւր համար: Երբ Աստուծոյ պատահապը անգլիոյ հայերը խողխողել կուտար, Գերմանիոյ ոտիկան կայսրը, իբր նշան իր անթառամ բարեկամութեան, անտր կուղարկէ, իր գերդաստանին լուսանկարը: Սուլածանը այս անակնկալ ձօնէն ինկայեղ՝ ժամանակին նամակով շնորհակալութիւն կը յայտնէ Վիեննային, ճիշտ ժամանակին դիւցազն Նեղին համար, եւ կը խոստանայ անոր, թէ օտար քրիստոնեաներուն ո եւ է վտանգ չը պիտի պատահի իր երկրին մէջ եւայն:

Մալաքիին ալ պատուի խոստում՝ կուտար ներքինապետ սուլածանը եւ սակեալ ինք գիտեց միայն իր ընկերը: Գերման կայսրը, որուն համար մեր սիրտը երբէք չէ տարցած, հակառակութիւն շատ կախողիք: Ի՞նչ կարելի է յուսալ կայսրէ մը, որ Աքիլէոսի դարերը կերպէ եւ որքան ն երանաւէտ պիտի գտնէ ինքը, եթէ չունի: մը ունենալ իբր երգիչ: Ամեն երկիր մարդկութեան ընդհանուր բարեբարներ ունեցած է, որոնցով կարող են պարծիլ ըրող ազգերը: Գերմանիան չէ ծնած դեռ այդ սիրտը: Գերմանները չեն կրնար հըպարտանար ճիւղմարտի, այդ մարդկային անէծքներով ծանրաբնուած նոխարով:

Գերմանիոյ կայսրը արդեօք այդ անժամանակ ընծայով հայութեան արցունքը կը հեղձէր...

Փրանսան դեռ ոչինչ ըրաւ: Մեր նախասիրական ազգը հիասթափ կընէ մեզ այսօր: Փրանսական կառավարութիւնը, սուլածանի փափուկ սիրտը չը վերաւորելու համար, այնքան ստողնացաւ, որ իր նոյն վրայ ասպնջակախութիւն ինտոնոլ Օսմանեան պանքի 15 հերոսները, Պուէնոս-Վըրտէ արտաքսնց, որպէսզի կարող չըլլաւ վերադառնալ: Փրանսացի այդ հարածը անմոռանալի պիտի ըլլայ մեզի համար: Փրանսական լրագրութիւնը գրեթէ ցարին շուրջ կը սըքուայ կը անիկա ժպտի Փրանսան ուրախ է, կը տիրի՝ հանրապետութիւնը սուգ կը ըսնէ: Սոսկական անկեղծ քարձրութեան մը վրայ գտնուող ազգի մը քարոզարար անկեղծը:

Յարժ Անգլիոյ թագաւորին պցնութիւնը, Գամպոնի սուլածանի նկատմամբ բռնած խիստ ընթացքը բռնի մը փոխելու տաւ են Փրանսական բախտակները թերթիկու լճարն, բայց ժամանակաւոր է ստիկա:

Ռուսական լրագրներուն մէջ ալ ժամանակէ մը ի վեր լայն շունչ մը կը փէ:

Պուլկարիան գրկարաց կընդունի մարդակեր Համուի ծիրաններէն պրծող հայ գաղթականները եւ ձրի կը սնդակտիտէ գամոնը իր հո:

դին վրայ: Պուլկարիա դեռ կզգայ իր եղբայրներուն քաշած կակիծները, եւ գիտէ թէ ի նչ է մոնոլոգական հայածանք ըսլածը: Չկնք կրնար մեր հրճանքը գուպ կազնի Պուլկարիոյ մեր տարաբախտ նըղայրներուն ցոյց տաւծ սիրաւիւր ասպնջակախութեանը համար:

Թ Ռ Ո Ի Յ Ի Կ Թ Ե Ր Թ

№ 11 Լ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն № 11
25 Սեպ. 96 Կ. Պ Ո Լ Ս Ի 25 Սեպ. 96
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵԻ

Ձեզ ենք դիմում, դուք, դիպլոմատներ, քաղաքագետներ, ազգերի տէրեր, պատմութիւն անողներ, մեր բողոքող նախատիքով լիքը խօսքը ամենից առաջ ձեզ ենք ուղղում:

Ի՞նչ արիք դուք, երբ տաճիկ ամբոխի սրիկայ մասը, զօրքի, ոստիկանութեան Հետ միասին ձեռք-ձեռքի տաւծ մայրաքաղաքի փողոցներով թափառելիս Հայ բանուորը, Հայ վաճառականը, Հայ քահանան, Հայ ինտելիգենտն էր որոնում ու տեղն ու տեղը, ձեր աչքի առաջ, օր ցերեկով անպատելի դժոխային տանջանքներ տալով մաս մաս անում...

Դուք գիտէիք, որ Պոլսի զանազան թաղերում—ամբողջ Պոլսում—նոյնանման տեսարաններ էին տեղի ունենում. բայց իրենց կատարելութեանը հասցրած. անմեղ Հայերի անմեղ արիւնով էր ներկուում ամբողջ Պոլսի փողոցները, աները, խաներն ու խանութները—անկիւն չէր մնացել, որ արիւնով չոռոգուէր. մահն էր, որ իր սև թևերը տարածել էր դժոխացած Պոլսի վրայ...

Մտածեցիք արդեօք բռնել արեան մէջ շաղխուած արիւնով պատած սուրբը, զպպել արիւնարբու, արիւնածարաւ, վայրագ դազանը: Ոչ, դուք միայն միջոցներ ձեռք առաք՝ բողոք միասին, որպէսզի դարերի ընթացքում կեղեքող—Հալածողը ազատ մնայ՝ գլուխը բարձրացրած ստրկի հասցրած վնասից:—Դուք այդ վնասը պակասացնել ջանացիք—այդ վնասը ձեր սեփական վնասն էր որովհետև: Փոխանակ արիւնը կանգնեցնելու անմեղներին օգնութեան հասնելու, դուք կէս գիշերով արեան հեղեղների միջով հերոսների մօտ վաղեցիկ ու կրկին դիպլոմատական խաղերով, զանազան խոստումներ առաջով բանկը ազատել փութացիք... Իսկ այնտեղ ամենուրեք տաճիկը իր գործն էր տեսնում, հազարաւոր անմեղների արեան հետ կանանց ու երեխաների անմեղ արիւնը խառնելով: Այդ դուք տեսնում էիք ու լուռ մնում, ջնայելով աղնիւ խօսքին, որ վեց այսպէս ասած մեծ պետութիւնների ներկայացուցիչներդ ի դիմաց Մարտիմովի, ծնկաչօք տեղ էիք բանկի հերոսներին կոտորածը կանգնեցնել խոստանալով, հայկական դատի, Հայ ժողովուրդի շահերը առաջ բերելով... Խաբեցիք:

Այդ էին պահանջում ձեզից ձեր պաշտօնական պարտականութիւնները, այդ էին պահանջում վերջապէս ձեր մարդկային պարտականութիւնները:

Միթէ արդարեւ քաղաքական կեանքի մէջ ամենատարրական մարդկային պարտաճանաչութիւնն անգամ

բացակայում է ու եւրոպական ազգերը իրենց ներկայացուցիչներով չեն կոչուած գէթ որոշ չափով կարգ ու կանոն մտցնել այնտեղ, ուր դժուար է տիրում...

Եթէ հազարաւոր անմեղների ողբ ու արցունքը, ամբողջ մարդկութեանը դիմած նրանց օգնութեան ճիշդ ու աղաղակը ձեր սրտին ոչինչ չի ասում ու դուք ընդունակ էք այդ բոլորին սանձարտութեամբ նայելու, հեռացէ՛ք, — մի՛ վրդովէք մեր գազանացած խիղճն ու միտքը...

Եթէ այս անգամ էլ հայ ժողովուրդի անմեղ արիւնք ի զուր թափուած լինի, եթէ այս անգամ վերջինը չլինի, մտակայ ահուելի կուի համար մեզ մտածել կրմնայ նորանոր միջոցների, տարբեր ձևի ու ծաւալի մասին, որից վնասուողները յամենայն դէպս միայն մենք չենք լինի... Ինչ կը լինի, թող լինի... Բայց և այնպէս մեր գրգռուած խղճի ու մտքի, մեր արիւնքով պատած աչքերի առջ մի բարոյականացած անբարոյական միտք է անցնում, որը մեզ վրայ սառսուռ է բերում...

Եթէ հայը իրաւունք չունի խաղաղ մարդավայել կեանք վարելու, այդ իրաւունքից նա կաշխատի զրկել և իր բոլոր թշնամիներին...

Եթէ արցունք, — թող ուրեմն արցունք...

Վ Ե Ր Զ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

— Փրանսայի տիկիներու մասնակցութեամբ մը յատուկ ազդեցութեամբ թախանձագին կը խնդրէ ուսաց ցարուհիէն, որպէսզի միջամտէ ցարին քով մարտիրոս Հայաստանը փրկելու համար:

— Թիւրք կառավարութիւնը որոշեր է՝ հայ յեղափոխականներուն հետ բանակցութեան մտնել, խոստանալով Ասիոյ բոլոր նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնել, միայն թէ ուսմանը գործածուած դադարեցնեն: Ասոր համար Տիրանպէյ Տատեան, Արթին փաշայի տղան, տաճիկ կառավարութեան կողմէ յատուկ պաշտօնով կը մեկնի Եւրոպա յեղափոխականներուն հետ համաձայնութեան մը յանգելու համար: Բարով, հազար բարով երթայ...

— Երզնկայի գաւառի, Քեմախ գիւղի մէջ խառնակութիւններ ծագած են, ուրիշ տաճկական զօրքերու հրամանատարը պատերազմական նախարարին հեռագրած է, որ եթէ զօրաց ուսուցիչի համար շուտով դրամ չուղարկուի, ինքընքը ամեն պատասխանատուութենէ ազատ կը նկատէ:

— Պ. Գամպոն սուլթանին յայտարարած է, որ եթէ խռովութիւններն ու ջարդերը նորեն սկսին, ամբողջ Եւրոպան զինու զօրութեամբ պիտի միջամտէ:

— Եկին-Աարբերդի մէջ նոր ջարդեր տեղի ունեցած են: Անգլիական տեղեկութիւններու համաձայն, ամբողջ հայ ազգաբնակչութիւնը բնաջինջ եղած է, իսկ ըստ տաճկաց 600 հոգի սպաննուած են:

— Ուրբաթ, սէլավքքի օրը, 500 երիտասարդ սօփութաներ, յարձակեցան Երլտզի վրայ գահընկէջ ընելու

համար սուլթանը, բայց յանկարծ Երլտզի պահպան գունդէն պաշարուելով՝ մեծ մասով կոտորուեցան. մնացածները յայտնի չէ թէ ինչ եղած են:

— Կուրի թէ Պոլսոյ դեսպանները խիստ ազդեցիկ դիրք մը բռնած են սուլթանի դէմ. կը գովեն մասնաւորապէս Ռուսիոյ դեսպանին կողմի ընթացքը:

— Պոլսոյ կողմը, Փաթիհ մղկիթին վրայ կարմիր տառերով տաճկերէն խոշոր յայտարարութիւններ փակցուած են, որուն մէջ հրաւէր կը կարդացուէր բոլոր մահմետականներուն, որպէսզի հայերուն նկատմամբ թշնամական դիրք չի բռնեն: «Անոնք, կաւեցնէ յայտարարութիւնը, մեր բարեկամներն են եղեր, բայց մեք չենք հասկցեր. անոնց թշնամութիւնը թիւրք ժողովուրդին դէմ չէ, զորս իրենց եղբայրները կը համարեն, այլ սուլթանի կործանարար վարչութեան դէմ է, որուն դէմ պէտք է ըլլայ նաև ամեն մահմետական:

ՆՆՈՐԱՏՈՒՈՒԹՅՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հայ Յեղ. Դաշնակցութեան սնդուկի մէջ ստացուած են. Դէվոլէժի Արիստոկրատից 10 ռուբլի, Պետրոսից 10 ռուբ., № 55-ից 3 ռուբ., № 65-ից 7 ռուբ., № 75-ից 5 ռուբ.:

Բօլք. Եամբօլի «Սասունեան» կոմիտէի սնդուկի մէջ ստացուած է Պօրիսովկրատի ազգայիններէ 100 Փրանկ Անլէրսից ստացուած է 360 Փր.:

Ֆիլիպպոսօլից ստացուած է 1100 Փրանկ: Սլիվլայի «Օժանդակ» կոմիտէի միջոցով ստացուած է. Ոթարձայի կայարանի հայ գաղթականներէ 40 լէֆ., Պօրիսովկրատ 30 լէֆ., Բայաճըք 33 լէֆ., Բարապուտար 25 լէֆ., Բարնապաթ 63 լէֆ. 60 սանթ., Իսքի Ջաղրա և Ելնի Ջաղրա 34 լէֆ.:

«Նաւահանգստի» սնդուկի մէջ ստացուած են. Մաթիթրոսն քաղ-ից Մարակ խմբի Մարտիրոսի ձեռք մի քանի ազգասէր երիտասարդներից 61 ռուբլի, Մի ոմն 5 ռուբ., Սովթաբանթիոն 5 ռուբ., Շահպաղեան 10 ռուբլի, «Նւէր Ուխտաւորից» մի հրացան:

Նոր-Բերդի համակրող ազգայիններից 29 ռուբլի 40 կոպէկ, Արարատ դաշտէն. — Արմէն 5 ռուբլի, Վսէժ 5 ռուբ., Գաղթական 15 ռուբ., Վարազդատ 8 ռուբ., Պերճ 15 ռուբ., Հրաչեա 10 ռուբ., Թիւման 5 ռուբ., Խոսրով 5 ռուբ., 12 պատանիներէն 20 ռուբ., Ոսկրիմ 5 ռուբ., Սիմ. Արեգակից 15 ռուբ.:

«Հուր» ք-ի Մարակ խմբից. Սուրէն 2 ռուբ., Ստեփան-Արտաշէս 3 ռուբ., Գասպար 30 ռուբ., Մամբրէ-Համբարձում 2 ռուբ., Շիրին 5 ռուբ., Սիմոն 10 ռուբ., Հայ մշակներից 10 ռուբ., Մեղքոն 2 ռուբ., Գալուստ 1 ռուբ., Մի ազգասէրից 1 պէնդան հրացան և 30 փամփուշտ:

«Կանաչ» ք-ի Մարակ խմբից՝ Մինաս Աղայի և Յովհաննէսի միջոցաւ հանգանակած 162 ռուբ. 30 կոպ. Տր. կեդ. կօմ. սնդուկի մէջ ստացուած է Փայլակից 10 լիրա:

Դաշնակցութեան անձամօթներից խմբուում է թղթակցութեան և ներդատութեան համար դիմել: Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse) Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան

ԴՐՈՇՆԻԿ

Հ.Յ.Գ. ԲԻՐՈՅԻ
ՊԵՐՊԱՐԱՆ
A.R.F. EURO
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

(ԹԵՏՐԱՆՆ ՎՐԱՅՈՒՆ)

Վերջին ժամին մեր ստացած հեռագրի համաձայն վանում Սեպտ. 23-ի (նոր տոմար) ընդհարումից յետոյ, Հոկտ. 2-ին տեղի է ունեցել մեծ կոտորած:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍ ՈՅ ԿԵՒ ԿՕՄԻՏԷԻ ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐԸ

Տէր,

Ձերբակալութիւնները կը շարունակին, անարդարութեան ատենները լիովին կը կատարեն իրենց հայալինջ պարտականութիւնը: զնտանները լեցած են հազարաւոր անմեղներով, որոնց միակ յանցանք է հայ ըլլալին:

Եւ իբր թէ քաղցը և համաճարակները բաւ չէին, այժմ ամենէն զարհուրելի տանջանքները վերապահուած են բանտարկեալներուն: Մինչդեռ բովանդակ հայութիւնը խմբովին կը հալածուի, բուն չարագործները, վայրենի քիւրտերը ոչ միայն չեն պատժուիր, այլ նաև թաղերու ապահովութեան հոգը յանձնուած է անոնց: Ինչ հեգնութիւն:

Հակառակ մեծ վէճերի խոստումներուն և ապահովութիւններուն, հակառակ վայրերուն ուղարկուած համբաււոր շրջաբերականին, նորէն Ակնի կոտորածը պայթեցաւ քաղաքակիրթ աշխարհի և Դահիճ-Համիտի վայրագ քաղաքականութեան աչքին առջև:

Օգոստոս 14/26-ի մեր յայտարարութիւնը և նոյն ամսւայ 16/28-ի մեր ազդարարագիրը արձակելէ յետոյ համբերութեամբ կսպասէինք մեր տարաբախտ հայրենիքի սրբազան դատին նկատմամբ եւրոպական դիւանագիտութեան բռնելիք նոր ուղղութեան:

Շատ լաւ գիտէինք, թէ կարճ ժամանակամիջոցի մը մէջ հնար չէր այդեցիկ բարենորոգումներ կատարել, սակայն կսպասէինք գոնէ առ այժմ մերմացուցիչ մի-

ջոցներով վերբերը փակել, նորանոր գազանութիւններու առջևը առնել, անմեղները պաշտպանել և միաժամանակ գաղթականութիւնը արգելել՝ որ ձեռն ատենով պատճառ պիտի ըլլայ այդ շարած թշուառներու մեծ մասին ակներև մահուան:

Աւա՛ղ, ոչ մէկ միջոց, բացի, թերևս, Քօիհանէի ուղղութիւնը ցուցահանդէսէն՝ մահմեդականներու մոլեռանդութիւնը աւելի բորբոքելու համար:

Մենք պարտականութիւն կը համարինք վերջին անգամ ըլլալով՝ ձեր ուշադրութիւնը հրաւիրել թէ վատանգաւոր խաղ է ազգի մը ճակատագրին հետ խաղալ, ազգի մը, որ աւելի հին է և աւելի քաղաքակիրթ, քան իր խողխողիչները և որ իր դարաւոր համբերութեանը վերջին ծայրը հասած է: Սպառնալիք մը չէ աս, այլ պատմական օրէնք մը, զոր կարելի չէ անգոսնել:

Մենք, գործի մարդիկս, մենք միշտ գործը խօսքէն նախամեծար սեպած ենք: Մեր վերջնական խօսքը կարդացիք արդէն մեր շրջաբերականին մէջ:

* * *

Յ. Գ.—Պարտք կը համարինք բացարձակապէս հերքել նաև այն, թէ Դաշնակցականները երբէք չեն մտադրած Պոլսոյ դեսպանատունները օդը հանել, ինչպէս կը տարաձայնեն հայատեաց թերթերը: Այդ լուրին անհեթեթութիւնը այնքան պարզ է, որ տարակոյս չի վերցնել, որովհետև մինչև հիմա, մենք միշտ պղտիկ յոյս մը տածած ենք հայկական գործերուն մէջ եւրոպական միջամտութեան մասին:

Զ ԷՆ Ք, Զ ԷՆ Ք

Պոլսոյ ապստամբութիւնից յետոյ առաջ եկած սուկալի իրարանցումը սկսում է քիչ թէ շատ իր որոշ հետևանքները ցոյց տալ: Մի քանի տեսակցութիւններից յետոյ, մանաւանդ ցարի ու Սալբուրիի, աւելի քիչ են հրապարակ նետուում զանազան տեսակ լուրեր, յաճախ իրար կատարելապէս հակասող: Հարցն այժմ աւելի պարզուած է երևում: Հեռագիրները իրար ետևից աւետում են մեզ «ուրախալի» լուրեր: «Դեսպան-

ները միահամուռ ճնշում են դորձ գնում», «աւելի շատ աշխատում է սուսական դեսպանը», «նրանք պահանջում են նոր միջոցներ, եթէ ոչ»... Եւ վերջապէս՝ «սուլթանը նոր իրազէ է հրատարակել նախկին ծրագիրն իրագործելու»...

Դարձեալ դիմումներ, դարձեալ իրազէներ, դարձեալ դիպլոմատիական խաղեր ու սուլթանական ծաղրաբանութիւններ: Եւ այս բոլորը քո գլխին է, թշուառ ժողովուրդ:

Սուլթանն արդէն մի անգամ ընդունեց դիպլոմատիայի առաջարկած ծրագիրը. դու այդ տեսար, հայ ժողովուրդ,—հարիւր հազար քո զաւակների սրախողխող դիակները, արիւնոտ փլատակներով ծածկւած հարիւրաւոր հայաբնակ վայրերը, աստանդական կեանք վարող մերկ ու անօթի հարիւր հազարաւոր զաւակներդ ահա այդ ծրագրի իրագործման արգիւնքը: Եւ միթէ այժմ որ և է դրական նշանակութիւն կը տաս այդ տեսակ դիմումներին ու իրազէներին. միթէ պարզ չէ, որ դրանք հետեանք են սուլթանի ականջի տակ որոտացած ուռմբերի և միակ նպատակ ունին մոլորեցնել քեզ և ընդհանուր հասարակական կարծիքը:

«Նոր իրազէ է հրատարակուել ծրագիրն իրագործելու»: Միթէ այս խօսքերը չեն ասում քո ականջին, թէ նոր պատրաստութիւններ են տեսնում կոտորածները շարունակելու և միթէ լուրջ կերպով չես մտածիլ ինքնապաշտպանութեան միջոցների մասին: Կամ դուցէ դու, լսելով դիպլոմատիայի խոստումները, սպասում ես, որ նա խիստ կերպով միջամտի և ինքը վերջ տայ քո թշուառութիւններին: Ի՞նչ ես սպասում ամենաշատը, զինւած միջամտութիւն: Դա անկարելի բան չէ. դուցէ և լինի: Բայց չէ որ զինւած միջամտութեան պահանջների հետ միասին դու լսում ես սուլթանի ձայնը, որը սպառնում է բնաջինջ անել ամբողջ հայութիւնը, եթէ մի այդպիսի փորձ անւի: Իսկ վերջին արիւնաշաղախ փաստերը բաւական էին քեզ համոզելու, որ այդ սպառնալիքները պարապ խօսքեր չեն: Եւ դու փոխանակ պատրաստուելու մտալուտ վտանգի առաջն առնելու, փոխանակ ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնելու, մոլորած աչքերդ յառած տարածութեան մէջ, անորոշ հայեացքով դիտում ես շուրջը և սպասում, որ մի ինչ որ անյայտ տեղից քեզ օգնութեան ձեռք հասնի...

Դարերից ի վեր ճնշւած բռնակալի երկաթեայ բռնունցքների մէջ, դարերից ի վեր սնւած ստրկութեան լծի տակ, դու կորցրիր քո ինքնավստահութիւնը և այդ ժամանակից սկսած՝ փրկութեանդ յոյսը դրիր միշտ այս կամ այն արտաքին, յաճախ վերացական ուժերի վրայ: Դու միշտ խաբւեցար: Քեզ չօգնեցին քո աւետարանը, քո եկեղեցիները, քո վարդապետների աղօթքները, քեզ չօգնեցին քրիստոնեայ պետութիւնները, քեզ չօգնեց «Մարդասիրութիւնը», չօգնեց և «Քաղա-

քակրթութիւնը»: Այլ ևս ո՞վ մնաց, ի՞նչ մնաց, որին կարողանաս դարձեալ դիմել... Բաւական չէ՞ն այսքան դասերը, ժամանակ չէ՞ վերջնականապէս հետեւելու քո լաւագոյն զաւակների փրկարար օրինակին:

«Տաճկահայ ժողովուրդին ընդհանուր կոտորածի վտանգ է սպառնում», գուշակեցինք մենք կոտորածներից շատ առաջ. մենք հրաւիրեցինք քեզ ինքնապաշտպանութեան, դու խուլ մնացիր մեր ձայնին. դու հրապուրելով դիպլոմատիայի խոստումներից, ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք չառիր և չարաչար կերպով կրեցիր քո թեթեւամտութեան պատիժը: Կոտորածներից յետոյ մենք կրկնեցինք մեր կոչը, յայտնելով, որ կուրբ դեռ չէ վերջացել փաստերով ցոյց տւիլք, որ Դաշնակցութեան ձեռքով զինւած բոլոր տեղերը կամ բոլորովին ազատ են մնացել կոտորածներից կամ շատ քիչ են տուժել: Կենդանի օրինակները ձեռներիս, մենք դիմեցինք նորից, մանաւանդ հարուստներին, անընդհատ «ղէ՛նք, զէ՛նք» գողալով, գոչելով... դարձեալ հարկաւոր ուշադրութիւնը չդարձրեց, և նոր աստնեակ հազարաւոր անպաշտպան զոհեր միացան իրենց եղբայրների, իրենց քոյրերի հետ:

Այս անգամ էլ զգուշացնում ենք քեզ, հայ ժողովուրդ. քեզ նոր կոտորածների վտանգ է սպառնում: Ինչ ընթացք էլ ստանայ գործը, լինի եւրոպական զինւած միջամտութիւն, թէ բոլորովին չլինի, միևնոյնն է՝ ինքնապաշտպանութեան միջոցներն անհրաժեշտ են:

Իսկ եթէ այսքան դառն ու դժգոհ դասերից յետոյ դու կատաղաբար դէն չես շարժուլ այդ իրազէ կոչւած փալասները և նոր աստաններով ուռմբերի նոր թնդիւններով չես պատասխանիլ անվերջ ծաղրաբանութիւններին, եթէ սրանից յետոյ անտարբեր մնացիր, ոչ մի միջոց ձեռք չառիր և դարձեալ ոչխարի նման կոտորեցիր, կոտորւիլ ուրեմն. դու արժանի չես ապրելու...

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս խոստացած էի, ընդհատած տեղէս կսկսիմ շարունակել:

Երեք թարգմանները շոգեհաւը մտնելուն պէս դիմագծերու վրայ իսկոյն կարգացինք թէ վատ լուրեր հաղորդելու են:

Մեզի յայտնեցին, թէ ֆրանսական շոգեհաւը կը պասէր բացը, շուտով պետք էր մեկնիլ: Հարւածը սուկալի էր, ապշած մնացինք, բայց այդ աստիճան լոբայեական եղաւ: Միթէ այդ աստիճան լոբայեական կարելի էր սպասել եւրոպական ներկայացուցիչներէն. ո՞ր մնացին պատուոյ խոստումները, գրաւոր թղթերը: Աւելորդ էին:

Երեք թարգմանները Պոլսոյ մէջ տեղի ունեցած վար-

դերը մեզի կը պատմէին և պատասխանատուութիւնը կը նետէին մեր վրայ: Մինչդեռ առաջի իրիկունը Մաքսիմով մեզի կապահովցնէր, թէ մեք հեռանալով մի աշխարհ երբ ու աջեւը պիտի առնուէր ու հակառակ պարագայի տակ, ջարդեր տեղի պիտի ունենային, կըսէր: Արդ, ինչու և ինչպէս պանքէն մեր դուրս ելլէն անմիջապէս վերջը ջարդը կսկսէր քաղաքի զանազան կէտերու վրայ, հակառակ դեպքաններու տւած խոստմանը:

Արիւննիս կեռար. զայրոյթնիս անչափ էր: Կուզէի ապտակել այդ ստորաքարը դիպրոմանները, հասկցնելու համար, թէ յեղափոխականներու հետ այդպէս խաղալու չէին. բայց Գարօի ինծի ըրած ակնարկները դիւքիչ մը հանդարտեցուցին: Խօսել սկսանք:

Անգլ. թարգման.—Մեծ անխոհեմութիւն դործեցիք պանքի վրայ յարձակելով, Եւրոպայի ուշադրութիւնը դրաւել ուղեցիք: Բայց այդ կերպով չէիք կարող ձեր նպատակին հասնիլ. բռնութեամբ եւրոպական պետութիւններէն միջատութիւն ակնկալելնիդ խնթութիւն էր:

Քրանս. թարգ.—Նոր ջարդերու պատճառ եղաք. արիւնը այսօր կը հոսի Ալալթիոյ մէջ: Ինչու զուր տեղը ձեր հայրենակիցներու սպանման պատճառ կը լինիք: Սպասեցէք ճ ամիս, տարի. մը: Մենք մինչև այդ ժամանակ կաշխատինք բարեխաւէ ձեր վիճակը: Սակայն պէտք է սպասել: Հտապելով չէք յաջողիր: Արտաստեցէք մեր վրայ և մենք ձեր հարցով պիտի զբաղուինք:

Լաւ կըմտնէինք այդ բառերուն արժէքն ու նշանակութիւնը ու ինչ նպատակով մեզի ըսելնին ալ պարզ էր: Պատասխանեցինք՝ «Մենք ըրածնիս գիտենք. թող Եւրոպան յիմարական կոչէ մեր ընթացքը այդ փոյթ չէ: Եթէ անմեղ արիւնը հոսեցաւ, դուք եղաք միակատոր պատճառը. բոլոր պատասխանատուութիւնը ձեր վրայ կը ծանրանայ: Խոստացաք մեզի, երբեք չէք թան մը չպիտի պատահէր. հիմակ անշուշտ լաւ կը տեսնէք, թէ քանի արժեքին ձեր երեկայ խօսքերը: Գործածած գէնքերնու համար վատ է կըսէք. դուք մեզի ստիպեցիք այդ միջոցին դիմելու: Յուսահատները ծայրայեղ միջոցներու կը դիմեն, իսկ մենք յուսահատներ եւք: Հայր ալ կարող չէ սպասիլ. նա շատ սպասեց, հիմակ դործելու ժամանակն է: Եւրոպան իր խոստումներով մեզի շատ տարիներ շոյեց, բայց միշտ իսաբեց մեզի: Այնքան զոհեր տւինք, 100,000 հայեր ջարդուցան, ու միշտ Եւրոպական պետութիւնները ձեռքերնին ծալած՝ նստած մնացին. յեղափոխականները՝ հայրենիքի դատով զբաղուողները չէին կարող անտարբեր թողուլ Եւրոպան: Անոնք երէկ դուրս եկան բողոքելու և պետութիւններուն յայտարարելու, թէ իրենց դրութիւնը անտանելի է: Եթէ այս անգամ բոլորովին չը յաջողեցան, երկրորդ, երրորդ անգամին անպատճառ անոնք կը յաջողին: Այսօր մենք էինք, վաղը ուրիշները պիտի շարունակեն նոյն գործը, բայց այս անգամ աւելի սաստիկ կ'երպով»:

Ռուս. թարգ.—Բռնած ընթացքնիդ ու ձեռք առած միջոցնիդ կոշտ ու անգութ էին. բայց քաջութիւն և կամք ցոյց տւիք: Պահանջնիդ նոր բան մը չէ. արդէն կզբաղէինք և պիտի զբաղուինք ասկէ վերջն ալ: Նրբ իր տւած խոստումներու մասին իրեն գիտել աւինք, պատասխանեց՝ «Հարկ չկայ դրաւոր վկայու-

թեան, մարդ չպիտի համարձակի, կըսէր, ձեր նկատմամբ վատ խօսելու և ես միշտ պատրաստ պիտի ըլլամ հերքելու եթէ համարձակին ձեր մասին վատ խօսելու: Իսկ վերաւոր ընկերները փոխադրւած են կը կրկնէր, ուսական հիւանդանոցը, իրենց առողջութենէն ետքը ուղած տեղերնին պիտի մեկնին:

Քրանսական շոգենաւը յատկապէս մեզի համար եկած մեր մօտը խարխաւ էր. շոգենաւը մեզի կապատէր: Խօսակցութիւնը վերջացած էր. մեկնեցանք ամենս մեկտեղ դէպի «Ծիրոնդ» շոգենաւը. Մաքսիմով մեր ընկերներուն կը պատուիրէր՝ խոհեմ ըլլալ և սպասել, բայց առանց բացառութեան, բոլոր տղերք խրոխտ պատասխաններ տւին:

Աւելորդ կը լինէր մէկիկ-մէկիկ ամենուն ըսածն ալ հոս գրել—կամփոփեմ ուրեմն այդ կարճ պատասխաններու իմաստն ու հոգին:

—Չէլէպի, մենք կը հեռանանք, բայց երկար չտեւեր ու նորից պիտի վերադառնանք մեր երկիրը: Մենք ձեզի պէս չենք, որ երթըցած տեղերնիս նոր հայրենիք մը շինենք. հոս այնքան անոյշ յիշատակներ կը թողուինք, որ անկարելի է մեզ համար օտար երկրի տակ երկար առնն մնալը: Կը մեկնինք, բայց կուզենք մեր հայրենիքի մէջ մեռնիլ:

Քրանսական թարգմանը նաւապետին ազգարարած էր մեզմէ զգուշանալ, «Ասոնք սրիկաներ են, ըսած էր, կարող են շոգենաւը օդը հանել»: Ինեղճ նաւապետը հաւատալով այդ ստոր պաշտօնեայի հրահանգին, մեզի հետ սկսած էր մեծ զգուշութեամբ վարել: Բայց ճշմարտութիւնը ուշ թէ կանուխ երևան ելլելու էր:

Շոգենաւը ճանապարհ ընկաւ դէպի Մարսէյլ: Խնդիրը շուտ պարզելով ամբողջ նաւազգ յարգանքով վերաբերեցաւ մեզի հետ: Նաւապետները, մանաւանդ բժիշկ Մէլիէրը, եւրոպացի բարձր դասակարգի պատկանող շատ մը անձնաւորութիւններ մեր հարցի նկատմամբ մեծ համակրութիւն յայտնեցին: Այն աստիճան մտերմացանք, որ նաւապետները ազնուութիւն ունեցան ներողութիւն խնդրելու մեզմէ, վարկեան մը մեր վրայ կասկած ունենալուն համար:

Չմիւռնիայ և Բիրէ թղթակիցներ շոգենաւ գալով լուրեր խնդրեցին և յանձնարարականներ տւին մեզի զանազան քաղաքներու ազատական թերթերու խմբագիրներու հասցէին:

Նաւապետները, շոգենաւին բժիշկը և ուրիշներ բողոքաբեր պատրաստած էին մամուլի մէջ հրատարակել տալու համար մեծ էր անոնց զայրոյթը դէպի պետութիւնները, մանաւանդ դէպի իրենց կառավարութիւնը:

Հասանք Մարսէյլ: Հազիւ նաւահանգիստ մտած էինք, նաւապետը հրահանգ ստացաւ, որ մարդ դուրս ելլելու չէ: Քիչ վերջը Մարսէյլը քաղաքապետութեան առաջին պաշտօնեան, քաղաքին գլխաւոր ոստիկանապետը և ուրիշ պաշտօնեաներ շոգենաւ եկան: Մեզի յայտնեցին, թէ հրահանգ ստացած էին իրենց կառավարութիւնէն, միասին դուրս ելլելու համար (կապահովցնէին, թէ պարզ ձևակերպութիւններ էին, որոնք անհրաժեշտ են ամեն կառավարութեան համար): Չէինք կարծեր, թէ Քրանսական կառավարութիւնը վատութիւն մը ընելու աստիճան պիտի ստորանար: Երկու նաւակով դուրս ելանք ու երկու թրանվայով ալ ճամբորդել սկսանք:

Քառորդէ մը յետոյ բանտին բարձր պատերը և երկաթէ հաստ դռներուն տեսքը, մեզի իրականութեանը բերին:

Մեզի կը բանտարկէին:

Քրանսական հանրապետական կառավարութիւնը կը բանտարկէր անիրաւի այն անձերը, որ հայրենիքի և ազատութեան համար կռուելէն ետքը իր հողին վրայ կուգային ապաստանելու:

Ստոր կառավարութիւն:

Մանրակրկիտ խուզարկութեան մեզի ենթարկեցին, բերաններս անգամ կը քննէին, վախնալով թէ ուժըբեր, վնասակար նիւթեր գուցէ պահած լինին: Յետոյ բոլորս զետեղեցին երկու մեծ ու ընդարձակ սրահներու մէջ: Տեղերնիս մաքուր էր. իւրաքանչիւրիս համար մահճակալներ պատրաստած էին: Յոգնած էինք, կէս գիշերը անցած էր արդէն, շուտով քնեցինք: Հետեւեալ օրը բանտին քովսէրը մեզ մօտ գալով՝ գոյքերնիս արձանագրելէ յետոյ սկսաւ մեր անունները արձանագրել: Ընկերներէս Ջարէհին երբ իր արճեստը կը հարցնէր պատասխանեց՝ « Կ Ե Մ Ս յ Ե Ղ ա փ ո խ ու թ իւ ն է: Սոյն համարձակ պատասխանը զարմացուց պաշտօնեան:

Օրեր անցան ու դեռ մենք կը մնայինք բանտին մէջ:

Քանիցս բողբոջեցինք արտաքին գործոց նախարարութեան և քաղաքապետութեան, բայց ոչ մէկ պատասխան գրաւոր կերպով չստացանք: Պահանջեցինք, որ մեզի դատի կանչեն և շուտով դրութիւննիս որոշեն: Քրանսական կառավարութիւնը եթէ բանտարկեց մեզի մասնաւոր պատճառներ ունէր, նա չուզեց որ մամուլը մեզմով զբաղէր, իսկ եթէ մենք Մարսէլը հասնելուս պէս ազատ լինէինք, ամբողջ ազատական մամուլը պիտի յուզէինք և ժողովրդական կարծիքը պիտի գրգռէինք տաճիկ բունկալութեան դէմ. իսկ Քրանսական կառավարութիւնը չուզեց այդ ու մեզ բանտարկեց մինչև այն ժամանակ, երբ հարցը արդէն շատ մեղմացած էր:

Քրանսական կառավարութիւնը խոստացաւ մեր 15 ընկերները նիւ-Վօրք ուղարկել, ճանապարհածախքը իր վրայ: Բայց նա չփոխեց իր տւած խոստումը յարդել. փոխանակ նիւ-Վօրք, Տիւս. Ամերիկայի, նա ուղարկեց մեր ընկերները Պուէնոս-Այրէս՝ հարաւային Ամերիկա:

Եթէ մեր ընկերները Միացեալ Նահանգները երթալ կուզէին, պատճառը այն էր, որ հոն հայրենակիցներ պիտի գտնէին ու գոնէ դիւրութեամբ գործ պիտի յաջողէին գտնելու: Քրանսական անամօթ և տմարդի կառավարութիւնը պարագաներէն չարաչար օգտուելով, թէ ճամբու ծախք առաւ մեր խեղճ ընկերներէն և թէ զանոնք դիտմամբ զոյգեց մի այնպիսի երկիր, ուր կը կարծէր թէ անոնք կորսուելու են (Տաճկական կառավարութեան խելք): Բայց մեր ընկերները վայրկեան մ'ալ նեղութեան մէջ չպիտի մնան: պէտք եղած միջոցները ձեռք առնուած են:

Թէև 17 օր «Սէն-Բիէրի բանտը» մնացինք առանց արտաքին յարաբերութեան, բայց կը շնորհակալուէինք հարկաւոր տեղեկութիւնները մամուլին հաղորդեցինք: Այդ մասին դժարութիւն գոնէ չունեցանք. լրջակիցները իրենք մեզի դիմեցին ու խիստ գոհ մնացին: Լուր բերը նոր էին: Մանաւանդ «Տէլը-Նիւսի» թղթակիցը, որը ամբողջ մեր բանտարկութեան միջոցին Մարսէլ մեր ազատմանը սպասեց. երբ մենք մեկնեցանք Ջարէրիա՝

գիշերանց, առանց զինքը տեսնելու, այդ պարոնը հաճեցաւ մեզի այցելել ու լուրբերու մեծ պաշարով մը ան ալ ուրախութեամբ մեկնեցաւ:

ԲԱՆԿԻ ԳՐԱԽՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՊԼՆԵՐԸ

Ժամի 6 1/2-ն էր, պատասխանատու ըրպէն հասել էր. ջերմ գրկախառնութիւններից նոր բաժնւած, եղբայրական վերջին համբոյրների քաղցրութիւնը դեռ մեր գրգռած շրթունքների վրայ, մենք մեզ փողոց գցեցինք. վեց նախարարձակողները առաջ ելան ու մի քանի ըրպէ չանցած՝ ցանկալի ԳՈՒԾԸ սկսեց. այդ գործը կնքեց ամենից առաջ մեր նախարարձակողներից Յովհաննէսի արևնով (Բէյնրցի, 28 տարեկան, սա այն անձն էր, որը մեր ժողովատեղում՝ Բարկէնի նախարարձակողների արած հրաւերին, առաջինն էր, որ այդ հրաւերին պատասխանեց): Նա եղաւ առաջին զոհը: Մնացած 5 հոգին վերջին դռան արգելքները մէկ, երկու, հինգ ատրճանակների պայթոցներ ու գետին էին գլորւած երկու զաֆթիա, դռնապաններից մէկը. միւսին յաջողեց փախչել: Մեր նախապէս կազմած ծրարի համեմատ նախարարձակողներից երեք հոգի պիտի դուռը հսկէին և միայն «Ազատութիւն» պոռացողները կարող կը լինէին ազատ անցնել:

Ահագին յուզմունքի ժամանակ ես ներս վազեցի առանց «Ազատութիւն» պոռալու, բայց խկոյն զգացի իմ անզգուշութիւնս: Դռան մօտ կանգնած մեր ընկերներից մէկը ատրճանակը ուղղել էր դէպի ինձ... «20 ի՞նչ կընես» — «Ազատութիւն» պոռացի ու մահից ազատեցի... Ինձնից յետոյ բաւական հեռաւորութեամբ վազում էին մերոնք. երբ մենք ներս մտանք, գլխաւոր հոգսերից մէկն էր դուռը գոցել, բայց այդ այնքան հեշտ չէր: մարդկանց դիակները, դռան ահագին հաստութիւն ունեցող ջարդուած ապակիները արգելք էին լինում. միւս կողմից բանկի յետեւը ապրող պահապան ոստիկանները մեր ատրճանակների պայթոցներից արդէն վրայ էին հասել ու անընդհատ գնդակ էին շարում մեզ վրայ: Առաջին ըրպէն մուտն էր մեզ համար, ի՞նչ էինք զգում, ի՞նչ էինք անում. գիտակցօրէն, թէ անգիտակցաբար՝ մերոնք էլ սանդուխների վրայից անընդհատ պնդակներ էին շարում պէպի դուռը. ի դուր էին անցնում իմ անվերջ աղաղակները՝ «մի նետէք, աղերք, մի նետէք», բայց ո՞ւմ ես ասում. գընդակները արագութեան մէջ մէկ մէկու հետ մրցում էին... Ես վախենում էի, որ մի գուցէ մեր տղերանց մի մասը, որ մի քիչ հեռու լինելու պատճառաւ դեռ չէր հասած՝ մեր եղբայրական գնդակների զոհ գնար... բայց իմ երկիւղս, ինչպէս յետոյ համոզեցայ՝ աներորդ էր: Մեր տղերքը անկարող կը լինէին մտնել՝ բաւականաչափ զօրք ու ոստիկաններ դռան մօտ, փողոցում կանգնած մեր դնդակներին կրկնակի գնդակներով էին բարկում...

Այդ ժամանակն էր, որ մեր պատահակի թշնամիների գնդակը գետին գլորեց մեր տղերանցից մէկին. նրա վրայ երկու ուժեղ կային — ընկնելու հարւածից: պայթեցան... ու մեր խեղճ ընկերը (Մարգար Միլաս-

եան, 18 տարեկան, նախադրածակ) անմիջապէս աւանդեց հոգին. մահը բողոքական էր: Նրա ամբողջ կուրծքը, փորը պատուած էր: Բայց միայն նա չէր վնասուողը.—նոյն պայթուածից վնասուցին և մեր յարիշ երեք տղաները: Չգիտեմ ինչպէս պատահեց, բայց ես ազատ մնացի . . . Ո՛հ, ինչ ծանր սրտաձկնիկ տեսարան էր ներկայացնում այդ ժամանակ մեր փորբաթիւ բանակը, մեր կուրի դաշտը . . . դա մեր կուրի առաջին բողոքէն էր ու այդպէս անյաջող . . . Չանցաւ երկու րոպէ, յանկարծակի մի ուրիշ անսպասելի դէպք տեղի ունեցաւ: Բանկի պաշտօնեաներից կամ բանկում գտնուողներից մէկը, որոնց վերաբերմամբ, ի դէպս ասած, մենք այնքան բարի ու քաղաքավարի դանակները—մեզ համար անորոշ շարժառիթներից դրդուած ատրճանակի հարուածը ուղղում է դէպի մեր խուճբը: գնդակը կպչում է մեր ընկերներից մէկի ձեռքին, որով նա բռնած ունէր մի ուսում. ուսումը վայր է ընկնում վերաւորուած ձեռքիցը ու . . . պայթում: Մեր ընկերը (Սեդրակ Եղիայեան, 24 տարեկան, Պիթլիգի Մ. . . դիւղէն) սոսկալի կերպով վնասուեցաւ. նրա երկու ձեռքը ջարդ ու փշուր էին եղել, ոսկրները դուրս էին եկել, արիւնը ահագին քանակութեամբ հոսում էր: Մի ուսում էլ—մտածում էի, և մենք կորած ենք. մեր կեանքը—մեր բոլորիս կեանքը մազից էր կախած . . . Ահա ստուգութիւնը, ընդհանուր սարսափը գնալով մեծանում էր. բայց և այնպէս կուրի շարժանակում էր . . . Աղմուկ, աղաղակ, հրացանի ու ատրճանակների պայթոցները խառնուել էին իրար. մուխը տիրել էր ամբողջ սրահը: Մեր չարաչար վնասուած ընկերոջ սրտաձկնիկ աղաղակներն էին, որ այդ ժամանակ ընդհանուր աղմուկի մէջ առանձնապէս աչքի էին ընկնում—«Պարոն, ես լինեցայ, ի սէր Աստուծոյ գնդակ մը . . . Չե՛ս կրնայ, Աստուծու սիրուն, ընկու տուր ես զիս գարնեմ» . . . «Չուր, ջուր, ջուր» էր պահանջում անընդհատ, ուսումով խորոված նրա մարմինը . . . բայց իմ ձեռքը չէր գնում դէպի ատրճանակս . . . իսկ նրան ատրճանակ տալը անիմաստ էր խեղճը իրեն հաշիւ չէր տալիս, որ ձեռները ջարդուած էին:

Թող ինձ ներսի, եթէ քրոնոլոգիական տեսակէտից այնքան էլ ճիշտ չլինի իմ պատմածս, բայց որքան յիշում եմ այդ ժամանակն էր, որ ես յիշեցի ուսումների գոյութեան մասին ու պատկերելով տղերանցը շարունակել կրակը, ես խաբարեաներից մէկի հետ ուսումը ձեռքիս դրան վրայ գանձող պատուհանին վազեցի . . . Դուռը շուտ մաքրեց . . . Մեզ պաշարողները, խոհեմութիւն արին հեռացան ու փողոցի զանազան անկիւններից սկսեցին կրակ անել դէպի պատուհանները: Պէտք էր վերջնականապէս տէր դառնալ բանկին, այդ էր մեր նպատակը, իսկ դրա համար հարկաւոր էր բանկի դուռը գոցել: Չօրքը արգելք էր դառնում. մտեցայ բանկի անկիւնի պատուհանին ու մեր սիրով խնամած ուսումներից մէկը նոցա մէջ գլորեցի . . . պոռոց, դժոխսօյն ձայներ տեղի ունեցան—կերակի դուռը չեկաւ, սակայն դրանից յետոյ բանկի դուռը բոլորովին մեր տրամադրութեան տակ ընկաւ: Մեր ընկերներից երկուսը իջան ու 1/2 ժամի չափ աշխատելուց յետոյ դուռը վերջապէս գոցեցին: Այժմ մենք տէր էինք բանկին. մենք մեր նպատակի առաջին կէտին հասանք, մենք մեր վրայ դրած պարտականութիւնները մասամբ կատարե-

ցինք. բայց դեռ շատ բան ունէինք անելու . . . Պէտք էր դիմանալ պէտք էր դիմադրել. իսկ դիմադրելու համար հարկաւոր էր մեր սակաւաթիւ ոյժերը յարմարագոյն կերպով դասաւորել, լաւ կէտեր ընտրել: Երբ ես զբաղուած այդ կէտերի հարցով անցնում էի մի պատուհանի քովէն՝ մէկ էլ տեսնեմ մեր ընկերը՝ Սեդրակը—այդ կենդանի մահը մտեցել է պատուհաններից մէկին և իբրև ողորմութիւն թշնամու գրնդակին է սպասում . . . Ամբողջ կէս ժամ կախ էր մնացել պատուհանից, բայց ցանկալի գնդակը չկար ու չկար . . . Երևի պաշարողների վրայ ուսումը սարսափը մեծ էր . . . Փորձեց երկու անգամ սանդուխներից իրեն վար նետել, բայց արգելքի հանդիպեց . . . Թող բարոյագէտները մեր այս վարմունքը ութերորդ մահահացու մեղքը համարեն, բայց մեր խիղճը, մեր ներքին աշխարհը դէմ էր, կը բողոքէր, որ մենք հայ յեղափոխականի մահուան անմիջական պատճառը դառնայինք, որ հայի կօպէկներով առած գնդակը հայ յեղափոխականի սիրտը մխէնք . . .

Կամաց-կամաց մահը իրենն առաւ, արիւնաքամ եղած 11 ժամ տանջելուց յետոյ սկսեց հանդստանալ . . .

Կարգադրելով դուռն, պատուհանի գործը, այն է մեր կտրիճներից մէկ մէկ, երկու մարդ կանգնեցնելով որոշ կէտերի վրայ, իմ առաջին դործս եղաւ վերև բարձրանալ հանդստացնել ժողովուրդը, պաշտօնեաներին, որոնք բնականաբար սարսափահար եղած՝ անկիւններն էին մտել, պարզել նրանց մեր ուղիները, մեր բուն նպատակը և այլն և այլն ու ապա նրանցից մէկի միջոցով մեր պահանջները ներկայացնել Եւրոպական պէտութիւնների ներկայացուցիչների խորհուրդին: Բայց նախ քան պահանջները ձևակերպել—տպած թղթերը մօտս չէին—ես մտաանջութեան մէջ էի իմ ընկերներս հրապարակի վրայ չէին երևում. վեր վազեցի, առաջին և երկրորդ յարկերը, հարցրի սրան նրան Հրաչի մասին—ոչ ոք չէր կարողանում գոհացում տալ: ոչ ոք չգիտէր նրա որտեղ լինելը: Հրաչ անունը անծանօթ էր իրենց (Այդ օրն առաջին անգամ էինք իրար հետ տեսնում): Միւս ընկերներս մասին՝ Բարկէն-Սիւնիի, Աշոտի ու Ե-ցու մասին ոչինչ տեղեկութիւն չունէի. ենթադրում էի, որ նոքա չեն յաջողել նոյն իսկ բանկը մտնել. գոնէ իմ բանկը մտնելուց յետոյ ոչ մէկը աչքովս չընկաւ, իսկ Հրաչին տեսայ, որ նա մտաւ բանկը, ուրեմն նրա բացակայութիւնը . . . սրտի մոմուտ էր զարթեցնում իմ մէջ . . . Սև ենթադրութիւններս արդարանում էին սանդուխների վրայ ընկած կաշեի կապերի շնորհիւ, որով Հրաչի ձեռքում գտնուած դիմամիթի ծրարը կապած էր . . . Միայն ես էի մնացել, ահագին պատասխանատուութիւնը վրաս . . . Այն ինչ ծանր րոպէներ էին, որ անցրի ես այդ ժամանակ . . . իմ զգացմունքներս, իմ դրութիւնս հասկանալու համար պէտք է նոյն հանգամանքների մէջ լինել. յամենայն դէպս ես տրամադիր չեմ ու անկարող նոյն իսկ այդ զգացմունքները գրի անցնել: Ամբողջ մարմինս սառուտ տիրեց. քրտինքը կոխել էր ճակատս, մի ինչ որ թմրութիւն կոխեց վրաս. բայց ես սթափուեցայ—այդ թմրութիւնը բողոքական եղաւ, միայն վերջին տարւայ կոտորածների 100,000 կլոր թիւը միսի պէս ուղեղիս վրայ էր ծանրացել . . . Ո՛հ . . . յիշեցի հայրենեացս դարևոր դառնութիւնը:

այն ահաբեկի գազանային պատկերները, որ բնականաբար Պոլսում ապա և գաւառներում կառավարութեան շնորհիւ պիտի տեղի ունենային. աչքերիս առաջ մէկ մէկ անցան հերոսաբար կուռղ մեր միւս ընկերները, որոնցից շատերը պիտի մարտիրոսական մահով մեռնէին, գոնէ ես այդպէս էի կարծում, Հրաչի կարծեցեալ մահը ու հեռակապէս յանկարծակի իմ վրաս ծանրացած ահագին պարտականութիւնը—այդ բոլորը միասին սթափեցրին, հոգի ու սիրտ տւին ինձ— յիշեցի ընկերոջս «սառնասրտութիւն», Գարօ ջան, սառնասրտութիւն» վերջին մնաս բարեկի խօսքը ու... սառնասրտութիւնը ինձ յետ եկաւ: Ես ոյժ զգացի իմ մէջ—իրաւունք նոյն իսկ... նոյն իսկ Աստու հետ բանակցութեան մէջ մտնել ու մեր ծրագրածը ի կատար ածել... Ես արդէն բանկի կառավարչի մօտ էի...

Փոքրիկ սենեակում նստած՝ կառավարչի հետ մի քանի ուրիշ պաշտօնեաների ներկայութեամբ աշխատում էի յիշել մեր տպած պահանջների գլխաւոր կետերը և գրի անցնել: Այդ ժամանակ գլուխս բարձրացրի ու... Հրաչն տեսայ... Ո՛հ, քաղցր, սուրբ բոպէներ... ուժերս կրկնապատկեցին, չէ՛, աւելի քան կրկնապատկեցին: Ես նոր հոգի ստացայ. ես նոր մարդ դառայ... Բաւական է. ես այստեղ կարող էի կանգ առնել, բայց մի ինչ որ ներքին ոյժ ստիպում է շարունակել, մի երկու խօսք ևս ասել. անշուշտ հետաքրքիր է իմանալ, թէ ի՞նչպէս պատահեց, որ մի բուռը մարդիկ—26 հոգուց բաղկացած, յանդուգն քայլ անելուց յետոյ, կարողացան տաճիկ ուժի դէմ կանգնել—մի ոյժի, որը, իրաւացի թէ անիրաւացի, քաջի համբաւ է վայելում:

Ինչպէս վերեւը յիշեցի, բանկի դուռը շատ ու շատ դժւարութեամբ յաջողեց մեզ գոցել. ամբողջ 1 1/2 ժամ՝ դուռը բաց էր. ուրեմն ի՞նչն էր արգելում, որ պատերազմի, արեան սովոր վիւնտրները չէին համարձակուում ներս խուժել ու մեզ վրայ յարձակուել... դժւար թէ մեր ատրճանակների կրակն էր արգելք լինողը. նա այնքան էլ ուժեղ չէր, նա բոլորովին ուժեղ չէր զօրքի մարտիկների հետ համեմատելով. անշուշտ կար այդտեղ մի բարի հրեշտակ, որ հայկական դատը կը պաշտպանէր, հայ արեանը վռէժինդր կը լինէր.— Դա մեր պաշտելի Բարկէն-Սիւնին էր, մեր ընդհանուր հրամանատարը: Նա վերջինն էր, որ պէտք է բանկը մտնէր.—այդպէս էր որոշած—նա երկրորդն էր, որ թշնամու գնդակին զոհ գնաց... նա առաջինն էր, որ իրեն պատրաստած ուռմբի ոյժը իր վրայ փորձեց... Թշնամուց առաջ: Երկու ձեռին երկու ուռմբ, մարտիկ գնդակը փորին, մեր ընկերների ասելով, նա մի քանի քայլ առաջ է վազել դէպի սանդուխը, բայց թուլացած չըթել է ծնկների վրայ՝ երկու ձեռքը վերեւ բարձրացրած, որ մի գուցէ ուռմբերը գետին կպչեն ու պայթեն: Նրա այդ մի վայրկեան ծունկ չըթելը միջոց է տւել մեր տղերանցը վերեւ վազել ու ազատուել մի վայրկեան յետոյ տեղի ունեցող երկու ուռմբերի պայթումից, որոնց միակ զոհը ինքը՝ Բարկէն-Սիւնին է լինում...

Բարկէն-Սիւնին պատառ-պատառ անող այդ երկու ուռմբերի պայթոցի մէջ եմ՝ տեսնում զօրքի սարսափահար լինելու գլխաւոր պատճառը, նրա մէջ պէտք է որոնել զօրքի անվճարականութիւնը... Բարկէնի կը-

տորները մեր թշնամու վրայ ընդհանուր սարսափ գցեցին: Մեր դաւած բերդի-բանկի-բանալիները Բարկէնը մեզ յանձնեց ու հոգին աւանդեց... Ահա թէ ով էր այն բարի հրեշտակը, որ մեզ բանկին տեղ դարձրեց: Բայց եթէ նրա եղերական մահը չլինէր, եթէ զօրքը յարձակէր մեր վրայ ու... յաջողէր... Ո՛հ, այն ժամանակ... գուցէ շատ քչերը գտնւէին, որ վերլուծէին մեր սրտի պարկուճը ու մենք, որ ողբի ու արցունքի դէմ ենք բողբոջում, հայրենեաց ցաւով ենք տոչորում, մեր երիտասարդ հասակում «աւազակի» անունով պէտք է կնքէինք մեր մահկանացուն, իսկ մեր դատի՞ն... Ճշմարիտ է, որ կենտրոնական կոմիտէի նախապէս կազմած, տպած ու կնքած պրօկլամասիօնը ու բանկից ընկելը մեր պահանջները կարգարացնէին մեզ մեր յիշատակը պատմութեան առջև, կարգարացնէին անկողմնապահ, անաչառ և անկաշառ մարդկանց առջև, բայց մինչև այդ անկաշառ մարդիկ հրապարակ գային ու իրենց անաչառ կարծիքը յայտնէին, տաճիկ ոսկով քուսացած թուղթ մրոտողները արար աշխարհ տակն ու վրայ կանէին, չինայելով մեր հասցէին—այդ դեռ ոչինչ—մեր ազգի, մեր ժողովրդի հասցէին իրենց անմաքուր սրտի ամբողջ բառարանը գործադրելով և այդ այն ժամանակ, երբ մեր ազգը ամենից շատ պէտք է պէտք զգար կարեկցութեան, օգնութեան... Արդեօք Բարկէնը չէ՞ր մեզ այդ բոլորից ազատող...

Մնացածի մասին ես աւելորդ եմ համարում յիշատակել իմ այս գրութեան մէջ՝ Հրաչը դրա մասին արդէն գրել է, իմ պատմածներս բնականաբար կրկնութիւն պէտք է լինէին:

Մի բան, որի մասին ոչինչ չի ասել և որը ես աւելորդ չեմ համարում յիշատակել, այդ այն ընդունելութիւնն է, որը վիճակեց մեզ ֆրանսիական նաւը մտնելու: «Աւազակներին» ոչ մի տեղ սիրով չեն ընդունում... բայց անցաւ միայն մի քանի ժամ, ամեն ինչ պարզեց ու առաջին բոպէի սառնութեանը յաջորդեց համակրութիւն, անհուն սէր, նոյն իսկ խընամբ: Առանձին քաղցրութեամբ ենք յիշում մանաւանդ նաւի բժիշկ Մէլլէրին. նա երբէք չի մոռացի մեր յիշողութիւնից. նրա մէջ մենք տեսնում ենք իսկական եւրոպացու, ազատ քաղաքացու մաքուր հոգին: Բժիշկ Մէլլէրը բացի իր անձնականից՝ մեզ համար հետաքրքիր է և մի ուրիշ տեսակէտից: Մենք համոզուում ենք, որ երբ Եւրոպան, մարդկութիւնը անկաշառ աղբիւրներից կը ծանօթանայ Հայաստանի ներկայ պայմանների հետ, երբ նա կը կարողանայ գեթ հարևանցի դադափար կազմել կատարած, կատարող ու կատարելիք իրերի մասին—ազնիւ բժշկի նման, նա խօսք չի գտնի պախարակել նոցա, որոնք այդ ամենի պատճառն են... Մի զայրոյթ, ժողովրդական հսկայական զայրոյթ բաւական է, որ ամեն ինչ կարգ ու կանոնի ընկնի այդ մեծ զայրոյթը հեռու չէ—ահա նրա նշանները երևում են...

Բժիշկ Մէլլէրը թանգ է մեզ համար իբրև սիմպտոմ... —Բարին, ճշմարիտը, յաւիտենականը միշտ յայր թող կը հանդիսանայ...

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Պ Ա Ր Ս Կ Ա - Տ Ա Ա Կ Ա Կ Ա Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ի Յ

Վասպուրականի ընդհանուր դրուժիւնը սարսափելի է: Այս անգամ ուղարկում ենք միայն Աղբակ գաւառի հարստահարութեան և աւերման տեղեկագիրը, որը մի մասն է կազմում դեռ: Վանի կոտորածների թիւը 700-ի է հաշուում մտաւորապէս: Վերջերս ուսուսկան հիւպատոսը հաւաքեց և իր հետ Ռուսաստան տարաւ Վանից թնդանօթի գնդակների մի մասը, մտ 40 հատ: Իսկ ընդհակառակն՝ Անգլիական հիւպատոսն աշխատում է ծածկել մինչև անգամ, թէ Վանում թնդա-

նօթներ են արձակել:

Վանի ժողովուրդը շատ յուսահատական վիճակի մէջ է: սարսափելի կոտորածին խիստ սպառնում է յաջորդել սովը: Ժողովուրդը արամադիր է գաղթելու, նոյնիսկ չրօնափոխ ընկելու:

Վանի կոտորածի հերոս՝ Սաարգին փաշան սուլթանից նւէր ընդունեց 500 լիրայի հետ և մի ականակուռ պատուանշան:

Ո՞ր մէկը և ի՞նչը գրել Վասպուրականի վիճակից, մի անապատ, աւերակների երկիր է դառել, որտեղ միայն բուերն են շէնցնողները...

Ահա Աղբակի մի մասի տեղեկագիրը, որից մտաւորապէս գաղափար կարելի է կազմել Վասպուրականի միւս գաւառների դրուժեան մասին:

Գ ի ն Ղ	ՏՈՒՆ	ՄԵՐՄ, ԲԵՌ	ՈՂՍ.	ԳՈՄ.	ԵԳՆՈՎ	ՋՐԱՂ.	ՁԻԹ	ՍՊԱՆ.	ԱՌԵԻ.	ԹԱԼ.	ԿՐՕՍԱՓՈՍ ԵՂԱԾ.
Բազ	60	180	300	100	300	7	—	1	2 կին	Ամբող.	—
Առակ	80	220	400	150	200	2	2	11	1 "	"	1 կին
Մալքաւա	30	70	150	63	157	1	—	—	—	"	—
Հէրէսան	78	230	1200	150	200	3	1	3	—	"	—
Չուխ	24	80	800	35	112	1	1	2	—	"	—
Կարապուլի	13	40	—	—	—	—	—	—	—	"	Ամբողջովին կրօսափ.
Երնկանի	75	162	760	48	240	2	1	—	—	"	2 տուն "
Խառատուն	32	145	434	35	160	1	—	—	—	"	—
Հասպետան	45	170	550	55	314	4	1	2	4	"	2 հոգի "
Սօրոտէր	30	120	348	36	200	5	—	5	3.	"	5 տուն "
Պապլասան	14	60	250	28	130	—	—	1	1	"	4 " "
Բարս	6	60	320	20	80	2	—	—	2	"	4 " "
Աշկերտ	4	35	250	16	35	—	—	—	—	"	2 " "
Բժնկերտ	35	110	360	38	124	2	—	—	—	"	2 քահան. "
Լաշկոտ	2	20	115	10	25	—	—	—	—	"	—
Զակալի *)	1	25	—	—	—	—	—	—	—	"	—
	509	1727	6237	784	2277	30	6	28	13		35 տուն 5 անձինք

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(ԵՐՈՂՊԱՎԱՆ ԹԵՐԹԵՐՈՅ)

Կ. Պոլսէն Գերմանական «Լօքալ Անցայկեր» թերթին կը հեռագրեն, թէ սօֆթաներուն մէջ սուլթանի դէմ յուզումը օրէ օր կաճի: Վերջերս կարմիր մեղաւոր դրած յեղափոխական յայտարարութիւններ ցրած են տաճկաց կողմէ: Կայսերական թիկնապահ, Մէհմէտ փաշա զարնւեցաւ, իբր հաղորդ «Երիտասարդ Թիւրքիոյ» կուսակցութեան:

Նոյն թերթի թղթակիցը տեսնելով արտաքին գործոց նախարարին, Թէֆլիզ փաշայի հետ, վերջինս հաստատած է, թէ սուլթանը ստորագրած է բարենորոգումներու իրադէն: Նախարարը խոշոր-խոշոր խոստումներ ըրած է թղթակցին ըսելով, թէ քրիստոնէաշատ նահանգները քրիստոնեայ կառավարիչներ պիտի ունենան:

*) Զակալի 40 հոգիէ բաղկացած մի ընտանիք խլամցել է:

Պաշտալայում մի երիտասարդ, իսկ Աղբակի առաջն. և սպասաւորը Բարդուղէմիոսայ վանքումն սպանւած են:

նան և ուրիշ զանազան բարեկարգութիւններ պիտի մտցնին: Թէֆլիզ փաշան չհաւատար Անգլո-Ռուսական համաձայնութեան կրսէ և թէ եւրոպական տերութեանց գործակցութիւնը եգիպտական խնդրոյն համար մտալուտ է:

Թերթը կեղծակացնէ. «Այս բոլորը ցոյց կուտան, թէ նոյն իսկ Թէֆլիզ փաշայի պէս մարդ մը, որ երկար տարիներ Պերլին ապրած է, դեռ չի նշմարեր այն ահագին վտանգը, որ կսպառնայ Օսմանեան կայսրութեան:

Կրումբօֆ փաշա, որ սուլթանին ձեռագիր նամակը Վիչնէլմ կայսեր յանձնելու համար Պերլին ղեկած է, գերմ. թերթի մը թղթակցին ըսեր է՝ «Թիւրքիան ամենածայրայեղ ելեմտական խեղճութեան մէջ է. ամեն տեղ կաշառակերութիւն է, որովհետեւ պաշտօնեաները թոշակ չեն ստանար: Սուլթանը ոչ մէկուն ազդեցութեան տակ է, ամեն բան ինք իր ձեռքովը կընէ. քիչ մը ջլախուտար դարձած է և խոյս կուտայ մարդոցմէ: Իր նախորդներուն դժբախտ ճակատագիրը կը տանջէ զինքը և կը կարծէ, թէ ինքն ալ նոյն տխուր վախճանը պիտի ունենայ»:

«Եւրոպական զինւած միջամտութիւն մը, կրսէ կը-

րումքքօֆ, Թիւրքիոյ բոլոր եւրոպացիներուն կոտորման պատճառ պիտի ըլլայ՝:

—Սուլթանը «Նիւեօրք Հէրալտի» թղթակիցը ընդունելով իր ներկայութեան, խնդրեց անկէ, որպէսզի իր ողջոյնները ու բարեմաղթութիւնները յայտնէ Պիզմարքին: Եւ իր բարձր համակրութեան իբր պայացոյց, Համիտը թղթակցին յանձնեց երկու թանկագին ամաններ Պիզմարքին տալու համար: Պիզմարքը սատկելու վրայ է, իշալահ, այդ ամանները անոր դերեզմանին վրայ դնելու պիտի ծառայէ:

—Իզգէթ պէյի, սուլթանի սիրական, և վերջին դէպքերու առթիւ կազմած քննիչ յանձնախմբի եւրոպացի անդամներու միջև վէճ ծագեցաւ: Առաջինը կը պահանջէր, որ քննիչ մասնախումբը Թիւրք ոստիկանութեանը արդարացնող թուղթ մը ստորագրէր: Նախագահը, Քամֆէվէն փաշա, բաց է բաց մերժեց, ըսելով, թէ ինք ճշմարտութիւնը փնտռելու համար կարգած է և եթէ բոլիսները յանցաւոր են, պէտք է պատժեն: Իզգէթ պէյ սպառնաց, նոյն լեզուով պատասխանեց նաև նախագահը:

—Վայսերական նաւարանի գործաւորները, որոնք շաբաթներէ ի վեր աւուրէք չէին ստանար, ծովային նախարարութեան դէմ աղմկալից ցոյց մ'ըրին և մտադիր էին Նըլլուզ երթալ, երբ մեծ դժուարութեամբ կասեցուցին զիրենք:

—Պոլէն կը հեռագրեն՝ «Մարաջախտ Փուադ փաշա, որ վերջին խոստովութեան ատեն, Գատի-գիւղի հայերը արիարար պաշտպանած էր՝ ձերբակալած է իրեն հետ բռնած են նաև շատ մը բարձրաստիճան սպաներ: Յայտնի չէ ուր բանտարկւելին:

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԶՆԻՈՒԹԻՒՆԸ
(ԱՎԱՍԱՏԵՍԻՊԱՏՄԱԾԻՑ)

«Ինչ որ ես պիտի պատմեմ՝ ձեզ գրում է՝ «Թիրոն-գի» առողջապահական բժիշկը—անհաւատարի պիտի թւայ, սակայն ճիշտ իրողութիւն է: Յեղափոխականները ներս արշաւեցին յիրաւի, և 157 հոգի ամեն ազգութեան պատկանող մարդկանց իրենց հետ փակեցին, կողպեցին դռները: «Մի վախենաք, պոռաց յաղթողների շէֆը, մենք ձեզ չպիտի ձեռք տանք, ոչ էլ ձեր գանձարանին. չչարժէք ձեր տեղից, մենք ունենք դինամիտ և շուտով ձեզ հետ օդը կը ցնդանք»: Արդարև, նրանք ոչ դողեր էին և ոչ աւազակներ: Բոլոր գերիները ազատեցին իրենց կեանքը, նրանց մէջ էին երեք փաշաների որդիք և սուլթանի մի քարտուղարը: Մի սանտիմ էլ չի գողացուել: Նեղանի վրայ կար մոռացած մի քսակ, ուր կային 10000 տաճկական լիրա և ահագին թուով բանկային սոմսականեր: Ինքը՝ յեղափոխականների առաջնորդը տարաւ այդ քսակը և անձամբ զրեց վերին յարկում, դիրեկտորի տրամադրութեան տակ: Շփոթութեան միջոցին գլխաւոր գանձարանը ևս բաց էր մնացել: Անբուռ խնդրեց առաջնորդից, որ փակէ անմիջապէս կատարեց խնդիրը: Այդ էպօպէյի ամբողջ պատմութիւնը մի քանի տողով անկարելի է անել: Ես կը բա-

ւականանամ միմիայն ասելով որ նրանց նպատակն էր 1) գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը Հայաստանի թըշւառութիւնների վրայ և 2) սարսափեցնել սուլթանին յանկարծակի հարձակով և մի քանի զիջումներ ստանալ. . .

Առաւօտեան ժամը 2-ին այդ պստիկ գարնիզօնը սպառազինւած ուղեց դէպի ծովափ. . . Շարժւեց Փրանսիական ժիրոնդը և ահա վեց օրից յետոյ Մարսել ժամանեցինք . . .

Աւաճ, հինգշաբթի օրւայ պաշտօնական կոտորածից յետոյ տեսանք, թէ որքան սուլթանը հաւատարիմ մնաց յեղափոխականներին տւած իւր խոստումներին: 2եմ ուզում ընդարձակել, արդեօք ում վրայ է ծանրանում այդ կոտորածների պատասխանատուութիւնը. մի փաստ միայն կուզեմ արձանագրել՝ այն նշանաւոր փաստը, որ 17 կտրիճներ լիակատար անձնագոհութեամբ օրը ցերեկով մայրաքաղաքի կենտրոնում գրաւեցին օսմանեան կայսրութեան ամենակարեւոր հաստատութիւնը, 13 ժամ մնացին այնտեղ, առանց մի սանտիմի ձեռք տալու և ի վերջոյ թողեցին բանկը ամենապատւարելի ու յաղթական կերպով:

Եւ ահա այդ երիտառորդ հերոսները, այդ առաքեալները մեզ հետ էին 6 օր շարունակ: Մենք կարողացանք քննել ու գնահատել նրանց. սպաներ և ուրիշ պաշտօնեաներ՝ մենք բոլորս հիացած ենք նրանցից, պատուով ենք, սիրով ենք նրանց:

«Էտուալ Բելժ»

ՆՈՒՐԱՏԻՈՒԹՅՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՎՆԸ

Պրովիդէնսի Հ. Յ. Դաշնակցութեան սնդուկի մէջ ստացւած է.

Մայիսի 7-ից մինչև օգոստոսի 31 անդամների ց ստացւած է 179 դոլար 80 սենթ., որից 62 դոլարը հանգանակւած է զէնքի համար կօփտէի հետեւեալ անդամներից՝ Խթան 12 դոլ., Վառօդ, Առիւծ, Մնցուր, Ս. Լոյս, Երկաթ, Բագարատ, Մաստառ, Հրացան, Հզօր Ծական դոլար իւրաքանչիւրը, Լ. Պալի 5 դոլար և մէկ մարթինի հրացան:

Լօյլելի Կօփտէի սնդուկի մէջ ստացւած է անդամակցական վճարումներից 38 դոլար:

Փիցբուրգի Կօփտէի սնդուկի մէջ ստացւած է 21 դոլ.: Նեաշայի Կօփտէի սնդ. մէջ ստացւած է 18 դոլ.: Բօլգ. Սօֆ. ք-ից հանգանակւած 53 անձերից 340 Փրանկ: Միկենոյն քաղաքի «Մշտական անանուն» ընկերութիւնից՝ 260 Փրանկ:

Փրանս. Նանսի ք-ից, 7 ուսանողներից 21 Փրանկ: Ուսանողներից՝ Տօրից 20 Փրանկ 50 սանթ., Արտից 5 Փր., Աբ. 5 Փր. 50 սենթ., Խնդ. 20 Փր.: Գետակ ք-ից Արմէնի միջոցաւ 17 ռուբ.: Ամ. ք-ից Արծաթ ջրից 1 ռուբ.

Դաշնակցութեան անձամբներից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)
Վիեննա, Դաշնակցութեան ազատ սպարան

ԴՐՕՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Ր Ա Մ Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Յուլիս 2-ին (ս. տ.) Բասէնի Քէօփրի-Քէօյ գիւղում ձերբակալւած և Վարնոյ բանտն է տեղափոխւած մեր թանկագին ընկեր՝ կարնեցի Արամ Արամեանցը (Աշոտ, Թաթուլ):

Հարցաքննութեան ժամանակը Արամը ամենայն համարձակութեամբ խոստովանել է իր յեղափոխական լինելը ու պարզել է «Դաշնակցութեան» նպատակը:

Նրան մեղադրուած են, որ իբր 150 հոգով սահմանն է անցել Շաքիր փաշային իր հետևորդների հետ միասին սպանելու դիտաւորութեամբ. մեղադրուած է նոյնպէս Նաչատուր Արեւիկեանի սպանման մէջ:

Արամին բանտի մէջ ենթարկուած են սոսկալի տանջանքներ: Նա պաղարհունութեամբ սպասում է իր դատավճռին:

Վ Ա Ն Ա Յ Ն ՈՐ Կ ՈՒ Ի Ը

Ինչպէս յայտնի է, յունիսի Վանայ հաշակաւոր կրօնից յետոյ Վարազայ լեռը ապաստանած դաշնակցական խմբերի մի մասը միայն Պետոյի առաջնորդութեամբ՝ նահատակեց դէպի Պարսկաստան տանող ճանապարհի վրայ. իսկ միւս մասը քաղաք իջա՝ ժողովուրդը բոլորովին անպաշտպան չթողնելու համար: Թաշիկ կառավարութիւնը ապշած տեսաւ, որ ոչ քաղաքի աւերւիլը, ոչ թնդանօթներով ուժբակոծիլը և ոչ յեղափոխականների հարկւններով կոտորելը վերջ չէ գնում յեղափոխութեան: Նորընտիր քրիստոնեայ «բարենորոգիչների» բերանով կառավարութիւնը աղւէսական հնարքներով հրաւիրում էր մեր ընկերներին դալ ու անձնատուր լինել, խոստանալով «ամեն տեսակ ապահովութիւն»: «Ամեն տեսակ ապահովութիւն» վայելելու փոխանակ, յեղափոխականները սկսեցին աւելի բազմանալ ու երկրի մէջ սկսեցին իրենց գալ նորանոր գնւած յեղափոխական խմբեր:

Սեպտեմբեր 10-ին (հին տոմար) յանկարծ վերսկը-

սում են թաղական խուզարկութիւնները և գտնում են այն տունը, ուր պահուած են լինում մեր ընկերները: Տեղի է ունենում ընդհարում. կռիւր տևում է ամբողջ օրը: Միւս օրը տղերքը փոխում են իրենց տեղը և միանալով միւս ընկերների հետ՝ երեք տուն են բռնում: Այնտեղ էլ քաջաբար կռուելով ամբողջ օրը, անցնում են սարերը: 300 զինուոր հետևում են նրանց, բայց մի քանի կորստաբեր կռիւներից յետոյ քաղաք են վերադառնում: Զինւորների կորուստը ահագին է, տղերանցից ընկել են 7-8 հոգի: Թողութից մարդ չէ վնասւած:

* *

Մեր ստացած հաւաստի տեղեկութիւնների հիման վրայ (տեղեկութիւնները հաւաքւել են գիւղէ գիւղ) յայտարարում ենք, որ Վասպուրականում յունիս ամսին տեղի ունեցած կոտորածների ժամանակ հայ զոհերի թիւը չի անցնում 6000-ից: Վան քաղաքի մէջ հայերի և տաճիկների զոհերի թիւը հաւասար է: Հայերից ընկածները անգէն, անպաշտպան, կոյր, կաղ մարդիկ են եղել:

«Իերիկներ Տագեբլատ»-ին հեռագրում են Վ. Պոլսից հոկտեմբեր 23-ին. «Վանում մեծ խառնակութիւններ են տեղի ունեցել: Ահագին թուով զինւած հայեր (ըստ լուրերի՝ մօտ 6000 հոգի) յարձակւել են թըրքական բերդապահ զօրքի վրայ և ծանր կորուստ են պատճառել նրան: Վալին հեռագրով մեծ զօրք է պահանջել ապստամբութիւնը ճնշելու համար:»

Ճ Ա Մ Բ Ի Ց Զ Ը Շ Ե Ղ Ի Ե Ն Ք

Դեռ թարմ է այն օրերի յիշատակը, երբ մրափում էինք ստրկական քնով, երբ մեր բռնակալները ընդարհամարհանքով էին արտասանում մեր անունը և մարդկութեան մեծ մասը մեզ մի ստրուկ և իդէալներից զուրկ ազգ էր համարում:

Այսօր ամեն բան փոխւել է, բռնակալները մեզից

ակնածում են, մարդկութեան լաւագոյն մասը սկսում է համոզուել, որ հայը զուել է ստրկութիւնից, ազատութեան ծարաւ ունի, վառ ցանկութիւն իր արժանաւոր դերը կատարելու մարդկային պատմութեան մէջ և այդ իրագործելու համար պատրաստ է ամեն զոհողութեան:

Հայ ժողովուրդ, գիտե՛ս այս փոփոխութեան պատճառը. պատճառն այն է, որ դու ընկար յեղափոխական ճամբէն, արտագրեցիր յեղափոխական տարրեր, որոնք զէնքերը ձեռքերին հերոսաբար պաշտպանեցին քո ազգային պատիւը և քո մարդկային իրաւունքները: Թըշնամին զգաց քո յեղափոխական ուժը, վճռեց մի հարւածով արմատախիչ անել նրան և կանգնեցնել իր անկումը: Վճռեց և փորձեց. նրա հարւածը ընդհանուր և սոսկալի եղաւ... դու շարեցիր:

Բռնակալն ուրախացաւ, դիպլոմատները հրճանքով ձեռքերը շփեցին և կարծեցին թէ վերջնականապէս ապաստել են հայկական կնճռոտ հարցից, որը չարագուշակ ուրականի նման վրդովում էր նրանց հանգիստը՝ նոյն իսկ իրենց շքեղ պալատներում:

Մոլորեց մինչև իսկ հայ յեղափոխականների մի մասը. նրա պարագլուխները այնքան ընկան, որ յետ նահանջեցին և սկսեցին ջնջել իրենց տարիներով քարոզած սկզբունքները ու լալ...

Իէս ու դէն շաղ ընկած, հայ ժողովուրդի ցաւերով չայրւած, նրա դրութեանը բոլորովին անծանօթ, քաղաքացիական արիութիւնից զուրկ հայ ճոռումաբաններն էլ սկսեցին անիծել հայ յեղափոխականներին և կոկորդիլոսի արցունքներ թափել իբր թէ մահացած հայ ազգի շիրմի վրայ... Թշուռներ:

Մեր երկրում տիրեց խորհրդաւոր լուսթիւն: Աւսուամպերը ծածկեցին մեր երկինքը: Վարձատեսները չէին հասկանում այդ չարաբաստիկ լուսթիւնը...

Բայց յանկարծ հայը որոտաց և աւելի կատաղի կերպով ցնցեց իր շղթայակապ վիզը: Սառուեց բռնակալը իր թախտի վրայ. մայրաքաղաքը տակնուվրայ եղաւ, շշկուեցին խելօք դիպլոմատները, դղողաց ամբողջ աշխարհը և ապշեց հայի կորովի վրայ:

Ոչ մի ժամանակ հայը այսքան համակրանք չէր գրտել. այդ նրա համար է, որ հայը այս վերջին շարժումով բարոյական աւելի մեծ ոյժ ցոյց տուց և որոշակի յայտարարեց՝ կամ մե՛զ ազատութիւն, կամ ընդհանուր դժբախտութիւն...

Ուշքի եկ հայ ժողովուրդ, զինւիր աւելի ու աւելի. սո՛ւր մեզ ձեռքդ, դնանք նոյն ճամբով, որով գնացին քո լաւագոյն զաւակները՝ Պետո, Բաբկէն, Գնունի, Արտաշէս և ուրիշները, որոնց անմահ հոգիները միմի վառ աստղ դարձած լուսաւորում են մեզ, որ մենք մեր ճամբից չը շեղենք:

Խ Ա Ս - Գ Ի Ի Ղ Ի Կ Ո Տ Ո Ր Ա Մ Ը

Բաւական ժամանակ անցած է այն տխուր օրերէն ի վեր, տխուր օրեր, որ այնքան արցունք մեր աչքերէն խլեցին: Ամբողջ ամիս կը սահած է այդ սարսափի օրերէն ետքը: Բայց վերջը խոր և արիւնը դեռ պաղած չէ: Պիտի կրնամ արդեօք նկարագրել բոլոր տեսած ու լսածներս:

Ժամը երկուքին (ը. թ.), յանկարծ Պատէմիք կը պաշարէր քիւրդերէ, լազերէ ու հրեաներէ: Աւարն ու ջարդը կսկսէր: Ամեն մէկ տուն յարձակում կը կրէր առնւազն 30-40 հոգիէ: Բիրերով, սուրերով և ռէվոլվէրներով զինւած՝ աւաղակները կը յարձակէին տուներուն վրայ, երկաթէ թակերով, վայլօգն երով ու մանաւանդ լաւ զինուորով դռները կը կոտորէին ու ներս կը խուժէին՝ «վարուն կեալուրարը» (կոտորեցէք քրիստոնեաները) պոռչտալով սովալուկ գայլերու նման, կը վազէին իւրաքանչիւր յարկ, բիրերու և սուրերու հարւածներուն տակ կտոր-կտոր կընէին արունքը, իսկ կիներուն վրայ կը խուզարկէին՝ ստակ կամ թանկագին առարկաներ գտնելու յուսով, երբեմն ալ կը սպառնային անոնց՝ «էրբէքլէրինիդի կէօստերին» (էրիկ մարդիկնիդ ցուցուցէք) ըսելով: Արունքը սպաննէ յետոյ աւարի կսկսէին: Ամեն մէկ կողմ կը պըրպտէին և կը կոտորէին այն բաները, զորս կամ անարժէք կը գտնէին և կամ դժւար փոխադրելի:

Սոսկալի է տեսարանը: Նշան-Թաղը և Հայոց գերեզմանատունը խոնւած է մահմեդական ու հրեայ խուժանը, որ մղեւանդութեամբ և ընչաքաղցութեամբ տոգորւած՝ կը յարձակի հայուն, կեալուրին վրայ: Հետզհետէ կը լայնայ աւարառուներուն ու մարդապաններուն հեղեղը. Գասըմ-փաշայէն, Պալատէն, Էյուպէն և ուրիշ տեղերէ մարտի նման կը թափին խաւիչ, այդ մենացեալ և կեղրոնէ հեռու գիւղը, և աւաղակապետին՝ Համիտին տւած հրամանին համեմատ, անխնայ կը ջարդեն հայերը, անձիտել կը ջանան այդ վնասակար մարդերը: 24 ժաման արտօնութիւն տըրւած է հայերը ջարդելու համար. պէտք է ածապարել ժամ առաջ մէջտեղէ վերցնելու դանոնք: Ամբողջ գիւղը կը պարաւանդեն ձիաւոր զօրքերը, որոնք պարզապէս հանդիսատես կըլլան և կը խրախուսեն քիւրտերը «հա՛ օլլում, հա՛ արսլանըմ, չափուր, վագըթ կէչիօր» (ճն, տղաքս, առիւծներս, շուտ, ժամանակը կանցնի) ըսելով: Քիւրտեր այս քաջալերութիւններէն օգուած՝ իրենց ուժերը կը կրկնապատեն. վաթսուական, հարիւրական հոգի կը յարձակին իւրաքանչիւր տան վրայ, կը ջարդեն, կը կոտորեն: Վառքերն ու բռնակիրները ճամբայ կեղնն դէպի Գասըմ-փաշա, Գարա-Աղաձի Հարմաններ—Խաս-գիւղի հրեաներուն և թըքերուն տները: Նոյնպէս կահ կարասիներով լեփլեցուն մաւուններ ու նաւակներ կերթան Պալատ և Էյուպ:

Խեղճ պատէմիկցիները չէին կարող բան մը ընել այս պատուհասին առջևը առնելու համար: Ոմանք տունէ տուն կը փախչէին, ոմանք ջրհորներն ու առաստաղները կապաստանէին, և ուրիշներ ալ պարտէզներու մէջ, ծառերու վրայ և կամ անտեսանելի տեղեր կը պահուրտէին: Քանի մը տուններէ սաստիկ դիմա-

դրուածին եղած է մինչև առաւօտ, քարաշէն տուն մը, ուր հաւաքւած էին բաւական ընտանիքներ, քանի մը ատրճանակներով ու իր կողմնակներով յարողած է մինչև առաւօտ դէմ դնել քիւրդերու ահաբեկ խմբերուն, որոնք անձի մեծ կորուստներ տարով՝ ետ քաշւած են: Միայն հետեւեալ առտուն, երբ անցիք, առանց ուղեւորներէի մնացած, եկեղեցին կապաստանին, քիւրդերը կը յարձակին տան վրայ և ջարդ ու փշուր կընեն ամեն բան:

Վոզուպիչներն ու մարդասպանները, Պատեմլիքը թալլելէ ետքը կը նետուին Եէնի-Մահալլէի և Եկեղեցի-փողոցի վրայ, կը ջարդեն, կը կողոպտեն ու կը թալլեն և մինչև եկեղեցի կը յառաջանան: Մեր չորս մարդերը կապառնան (եկեղեցւոյ մէջ 7 հոգի էինք) կրակ ընել քիւրտերուն վրայ, սակայն կողոպտող հայերը կաղաչեն, կը պաղատեն, որ տղայքը հանգարտ կենան և դէնք չքաշեն. «ոտընիդ պահնիմ՝ զաւակներս, կը սեն, կրակ մ'ընէք. թող առնին տանին մեր մայրն ու միւլքը, աման զաւակներս, մ'ընէք, հոգինիս ազատիք»: Տղայք կը լռեն, և քիւրտերը կը կողոպտեն տուները ու կերթան:

Այսպէս, գիշերուան ժամը 2-ին մինչև առաւօտ, քիւրտերը, թիւրքերն ու հրեաները տենդոտ ոգևորութեամբ, կողոպտեցին ու թալլեցին Պատեմլիքը, Ենի-Մահալլէն և Եկեղեցի-փողոցը: Եէնի-Մահալլէի մէջ, տունէ մը բաւական վնաս հասցուցած են քիւրտերուն սպաննելով 10-15 հոգի: Երբ մարդ մըն ալ, որ չորս փամփուռ և ժանգոտած ատրճանակ մը ունէր, երկու հարւածով տապալած է երկու քիւրտ և յետոյ ինք ալ սպաննւած ահաբեկ խումբ մը քիւրտերէ:

Չրգ-Սալընը մինչև առտու ազատ մնաց ջարդէ ու կողոպուտէ. հոս շատեր չէին գիտեր, թէ ի՞նչ տեղի կունենար Պատեմլիքի մէջ և ուրիշ կողմեր. երբեմն երբեմն կը լսէին վայնասուններ, ճիշեր ու ատրճանակի ձայներ. նաև խումբ-խումբ քիւրտեր, բիրերով և լախտերով ղենւած՝ կանցնէին կերթային դէպի Պատեմլիքի կողմը. ամեն մարդ արթուն էր, վախի և մտատանջութեան ենթակայ: Բազմաթիւ հրեաներ անկողիններ ու կարասիներ շարժած՝ կանցնէին Չրգ-Սալընէն ու կերթային բուն Խաս-գեղը, հրեաներուն բնակած թաղը: Չրգ-Սալընի հայերը կը կարծէին թէ հրեաները կը փախչին քիւրտերու առջևէն, մինչդեռ անոնք աւար ու կողոպուտ կը տանէին իրենց տուները:

Արևուն ծագման հետ յարձակուով սկսաւ Չրգ-Սալընի վրայ. քիւրդերը իրենց ամբողջ ոյժը կեդրոնացուցին անոր վրայ. ժողովուրդը սկսաւ փախչիլ դէպի եկեղեցի՝ տուները թողով քիւրդերուն ձեռքը: Չրգ-Սալընի հայ երիտասարդներու խումբ մը, միայն փողոցի քարերով ղիւնւած, յարկեցաւ բաւական ժամանակ ետ մղել ու փախցնել քիւրդերու ահաբեկ փոխակներ, սակայն տեսնելով, որ իր տրամադրութեան տակ պէտք եղածին չափ քար չունի և ամեն կողմէ կը պաշարուի, կրցած է ձեռքբերել թշնամին ու փախչիլ եկեղեցի:

Այսպէս, խեղճ Խասգեղը 10-20 ժամ կողոպուտի և ջարդի ենթարկուեցաւ, և Պուլսոյ թաղերուն մէջ ամենէն մեծ հարւածը կրեց: 800-ի չափ հայոց տուներէն հազիւ 15-20 հատ դերձ մնացած են կողոպուտէ: Վոզուպուտի մասնակցողներու մէջ նշանաւոր եղան հրեա-

ները, որոնք քիւրդերուն ու թիւրքերուն գլուխն անցած՝ մատանիչ կընէին հայոց տուները, կաւիճով կը գրէին դռներուն վրայ, և իրենց ձեռքը ինկած կահ-կարասիները կը փոխադրէին իրենց տուները: Պէտք է ըսել սակայն, թէ գտնուեցան խիստ սակաւթիւ լուսամտ թիւրքեր, որոնք պատասպարեցին բաւական ընտանիքներ իրենց տուններուն մէջ: Ճամաճի Հիւսնի ալա 20-ի չափ հայ պահած է իր տունը և քանի մը օր կերակրած: Սիւտիճէի կողմը քանի մը թիւրքեր իրենց տունն ընդունեցին պատեմլիքի ընտանիքներէն. ոմանք: Չրգ-Սալընի պահանջներն Քօլիս-2 աւուշի բազմաթիւ հայեր պահպանած է պահանջներն մէջ, և ջարդին առաջը առնելու համար, զինուոր ուղած է գիւղին հարեւարակաւէն, որ արհամարհած է զայն, յստան գայլը իլէ ելլատըմ (յարգի նաւակով ձամբած եմ) պատասխանելով:

Հինգշաբթի առտու կանուխ եկեղեցին ենք երեք ընկեր: Ջարդէն ազատած հայերը հեկհեկ կը վազեն եկեղեցի՝ ապահով ապաստանարան գտնելու համար հոն: Ի՞նչ սրտաճմլիկ տեսարան... գունատ և դիւահարի դէմքեր են, որ ներս կը մտնեն, լեղապատառ մանուկներ ու օրիորդներ, որոնք նազած կիսնան. «հայրս, հայրս» կը պողայ մէկը, անդին ուրիշ մը՝ «մայր, զաւակս ո՞ր է...»: Հետզհետէ կը հասնին այրեր, կիներ, մանուկներ, ծերեր, որոնք ճչեր ու վայնասուններ արձակելով՝ ինքզինքնին եկեղեցիէն ներս կը նետեն: Մինչև իրիկուն, ահաբեկ եկեղեցին կապաստանին 2-3000-ի չափ մարդեր: Սակալի է, որ 800-ի չափ բաւառացիներէն հազիւ 50 հոգի կը գտնուին, միւսները սպաննւած են հարմաններուն մէջ, տուները և ձամբան:

Երեք ընկեր խորհեցանք, որ 3000-ի մօտ բազմութիւնը պաշտպանելու համար, պէտք էր ատրճանակները ժողովուրդին ձեռքը տալ, քանի որ չունէինք մեր ընկերներէն մեկ-երկու հոգի, որոնք բացակայ էին: Առտի, 40 ատրճանակները վարժ ու քաջ երիտասարդներու յանձնեցինք, որոնք փախչուած զէնքերը տեսնելով և մեր պատէրները լսելով՝ սկսան շունչ ու ոգևորութիւն առնել: Ժողովուրդը հանգստացաւ քիչ մը:

Քիւրդերն ու ոստիկանները եկեղեցիէն բաւական հեռու կրնային գալ և անկից ասդին չէին համարձակեր. անգամ մը միայն քանի մը քիւրդեր մինչև եկեղեցիին մօտ հալածեցին հայ ընտանիք մը, սակայն մեր ընկերներէն մին մէջ մը պարպեց և քիւրդերը անհետացան: Ոչ ոք դուրս կելէր եկեղեցիէն. դռները ամրակէս փակ էին, միայն մեկ դուռը կը բացէր՝ ժողովուրդը ներս առնելու համար:

Հինգշաբթի օրը յարձակում չեղաւ եկեղեցիին վրայ, սակայն քիւրդերն ու թիւրքերը կը վխտային Պատեմլիքի, Եէնի-Մահալլէի և Չրգ-Սալընի պարսպ տուններուն մէջ և փողոցները, ուր հայ կը փնտռէին սպաննելու համար: Գիշերը անցուցինք խաղաղ: Արբաթ օրը մինչև իրիկուն եկեղեցի եկան անոնք, որ ապահով տեղեր պատասպարւած էին, որով եկեղեցին լեցաւ. մինչև իրիկուն ու է դէպք չպատահեցաւ: Գիշերը, ժամը 5-ին, յանկարծ դուրսէն ատրճանակի ձայներ լսեցան, որոնք սկսան պատասխանել մեր տղաքները: Ահաբեկ խմբեր ու իրարանցում եկեղեցիին մէջ: Վոտորածին ու թալանին ենթարկւած ժողովուրդը կը կարծէր որ զինքը կը պաշարեն նոյն իսկ եկեղեցիին մէջ: Բաւա-

կան սպասելէ ետքը, տեսանք որ ա՛լ ձայն չէր գար դուէն: Մենք ալ լռեցինք և ժողովուրդը հանդարտեցուցինք: Սակայն հետևեալ օրը, բաւական թուով ընտանիքներ, գիշերուան դէպքէն վախցած, եկեղեցիէն դուրս ելան ու ցրւեցան ուրիշ գիւղեր: Անոնց հետևեցան ուրիշներ ալ, որոնք՝ հակառակ մեր խնդրանքին, ելան գացին: Այսպէս սկսաւ եկեղեցիէն դուրս ելելու փափագը: Մարապետն ու իր հաշակալ Խաչիկ Քիւլահեանը եկեղեցի եկան ու յորդորեցին ժողովուրդը, որ դուրս ելէ: Մենք սպառնացինք անոնց և ստիպեցինք, որ դուրս ելեն: Նոյն օրը Խաս-գիւղ եկաւ Բարթողիմէոսին ձագը, Արիստակէս վարդապետը, որ եկաւ ըսաւ ժողովուրդին թէ, յշնորհիւ վեհափառ սուլթանին կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ ամեն տեղ. պէտք է ամեն մարդ իր տունը երթայ. սուլթանը ամեն բան պիտի հոգայ: Ժողովուրդը մեծամասնութեամբ մերժեց, և Արիստակէս ստիպւեցաւ առնել քաջը: Առաջարկութիւնը տեսնելով, որ ժողովուրդէն մաս մը դուրս կելլէ և մեծ մասը կը մնայ եկեղեցիին մէջ, սկսաւ հնարքներու դիմել: Նախ սպառնաց՝ ըսելով որ հացէ պիտի կտրէ, եթէ դուրս չելլէ ժողովուրդը. յետոյ Բարթողիմէոսը զրկեց Աստուածածնի երկուշաբթի օրը: Տեղապահը բեմը ելաւ, կոկորդիլոսի արցունքներ թափելով՝ իր տիրոջը, Համսին, և իր ցաւակցութիւնները յայտնեց ժողովուրդին: «Միրելի Խաս-գիւղցիներ, իմ վեհափառ տիրոջս գացի, ձեր մասին խօսեցայ. խորին ցաւակցութիւն յայտնեց, և իր հայրսինամ հոգածութեամբ իբր ապացոյց՝ 1200 ոսկի յանձնեց ինձի՝ ձեզի տալու համար: Իմ վեհափառ տէրս ամեն միջոց ի գործ դրաւ երկրին անդորրութիւնը վերահաստատելու համար. ուստի կը հրաւիրեմ ձեզի, որ դուրս ելէք, տուներնիդ երթաք. ձեր ամեն կորուածները պիտի փոխարինւին»:

Ժողովուրդէն շատ քիչեր ընդդիմացան, մինչդեռ մեծամասնութիւնը դուրս ելելու կը փութար: Ընդդիմացողներէն ոմանք կը պռային՝ «սրբազան, ի՞նչ ընենք տուն երթանք, ո՞չ անկողին ունինք, ո՞չ կարասի, պատուհաններն ալ կտրած են. չոր տախտակներուն վրայ ի՞նչ ընենք»:— «Հայրս կուզեմ ես, սրբազան, հայրս ո՛ր է»: «Մենք չենք կրնար դուրս ելել, վստահութիւն չունինք քու տիրոջդ վրայ, որովհետև ան մեզի կը կտորէ կոր»:

Տեղապահը այս ընդդիմութիւնը տեսնելով՝ սկսաւ աղաչել, պաղատել. բայց ի զօր. մերժողական պատասխանները հետզհետէ կը շատնային: Ստիպւեցաւ եկեղեցիէն դուրս ելել, և Քալթանեան որբանոցը գնաց: Քիչ մը ետքը, մարապետը, Խաչիկ Քիւլահեանը, Ռէթէոս Թադէոսեանը, Գրիգոր Ադամեանը և Բապուճճի Օննիկը եկեղեցի եկան և սկսան ժողովուրդը համոզել որ դուրս ելէ: Մենք յդուրս մի՛ ելէք՝ կը պռայինք, անոնք յդուրս ելէք, կառավարութիւնը այսպէս կըսէ կոր, եթէ չելէք, հաց չպիտի տայ և եկեղեցին պիտի պաշարէ, կըսէին: Ժողովուրդը մեծամասնութեամբ անոնց կողմն էր, որովհետև հացը անոնց միջոցաւ կուգար: Անթուրութիւնը կատարէր զինքը, որ բռնութեան տուած խոնարհի: Առաջարկութիւնը լուր տարածեց, թէ բոլոր կարասիները իրենց տէրերուն պիտի վերադարձնեն, թէ թիւրքերուն և թէ հրեաներուն տուները կը կտուարկուին և կահկարասիները դուրս կը հա-

նեն կոր: Միամիտ ժողովուրդը, ոչխարի նման սկսաւ դուրս ելել և կտոր բրդուճ բաներ եկեղեցի բերել, իբր կարասի: Ի՞նչ էր առածը:

Ատորած պոստեր, պարապ սնուկներ, լաթի կտորներ, ջարդուպիշուր եղած հայելիներ, հին սէտիրներ և այլն: Կորուստին 1000-ին մէկը չի կար: Հապա անձի կորուստնե՞րը. անոնք ո՞վ պիտի տայ... Օ՛հ, ատի մոռցած էր ժողովուրդը, որ հիմա հաց ու կարասի կը փնտռէր միայն: Այսպէս սկսաւ ժողովուրդը դուրս ելլել ու ներս մտնել: Ա՛լ եկեղեցիին դուռը բաց էր, ամեն մարդ արձակ համարձակ կը մտնէր կելլէր: Երեք ընկեր երբ տեսանք որ ժողովուրդը մեր բոլոր յորդորները, մեր բոլոր աղաչանքները ու յանդիմանութիւնները մտիկ չեն, ժողովեցինք զէնքերը ու ապահով տեղեր պահեցինք և առանց մեկուն բան մը ըսելու՝ գիւղէն հեռացանք: Արդէն մեր մեկնելէ առաջ, Մարապետը, Քիւլահեանը և Փապուճճի Օննիկը մեզի կառավարութեան մասնած էին՝ ըսելով թէ այս ինչ անուշով տղաքները խռովարարներ են, որոնք ժողովուրդը կը դրդեն, որ դուրս չելլէ: Մեր մեկնելէն ետքը իմացանք, որ ժողովուրդին փոքրամասնութիւնն ալ եկեղեցիէն դուրս է ելել, ուր մնացեր են միայն անտուն, անտէր գաւառացիները: Առտու մը կանուխ զինուորները կը պաշարեն եկեղեցին, կը մտնեն ներս և գաւառացիները ժողովելով՝ կը տանին բանտ... Այնուհետև եկեղեցիին քանի մը անգամ կը խուզարկեն, կը դիմախոսները կը դարձնեն, խորանը կը քակեն, գետնի տախտակամածներն ու քարերը կը հանեն՝ ուսմբ ու զէնք գտնելու համար. սակայն ոչինչ կը գտնեն: Այլ ձերբակալեն շատ մը երիտասարդներ, չափահաս տղաքներ և տարիքոտ մարդեր, որոնց մէջ կը գտնուին եկեղեցիին ժամկոշները: Պետրոս ժամուջը, Տեճի ու չարչարանքի չկրնալով դիմանալ կատարի խոտովանիլ, թէ ինք պահած է զէնքերէն և ուսմբերէն մաս մը: Ձերբակալելէն երեք օր ետքը ստիկաններու զինուորներու և լաղըմճիներու ընկերակցութեամբ, եկեղեցի կու գայ, կը ցուցնէ զէնքերն ու ուսմբերը պահած սեղը, ուրկէ կը հանեն 8 ուսմբ և քանի մը ատրճանակներ:

Հիմա խասգիւղցի երիտասարդներէն շատերը, ճիւղ կառավարութեան ճանկին տակ չէլնալու համար, ստիպուած են Պոլսէն փախչիլ և ապաստանիլ արտասահման: Իսկ գիւղը մնացողները մեծ մասամբ կիներ, օրիորդներ ու մանուկներ, կառավարութեան որոշումով ցրւած են կամ իրենց տուները, և կամ ամիրաներուն խոշոր տուները, որոնցմէ խորաքանջիւրը 30-40 ընտանիք կը պարունակէ: Առաջարկութիւնը բարեհաճած է քանի մը օր չոր հաց շնորհել՝ հետզհետէ քանակութիւնը պակսեցնելով և կալէթայի վերածելով: Քրանսական և Անգլիական դեսպանատներն են, որ հիմա կը զրկեն հաց, խահէ, շաքար, նպարեղէն և այլն:

Ն Ա Ս Ա Կ Տ Ի Վ Ր Ի Կ Ի Յ

17/20-ին սկսածներ 96 թ.

Արակ են ձգել կայրեն մեր ուշխարհ...
Թուէս 10՝ օր առաջ հայաշատ Ակն քաղաքը սրի հրի

ճարակ դարձաւ: Բազմաթիւ կանայք ու աղջկերք պատկենին փրկելու համար՝ իրենք զիրենք հիւրընկալ եփրատի ալեաց յանձնեցին: Մանրամասնութիւններ կը պակսին:

Նոյն բախտին մատնեցաւ Բինկեան գիւղը, երեք աննշան տներ միայն ազատեցան: Ապանւածների թիւը 30 է. որը մնացողները մերկ ու անօթի լեռներն են ապաստանած:

Այրեցին նաև Կամա և Զիմառ գիւղերը. ամեն մի գիւղը 20-30 հոգի զոհ տուաւ. ազատողները նոյնպէս անտուն ու անտէր կը թափափին:

Աեց օր առաջ պաշարեցան Տիվրիկի արևմտեան կողմը գտնուող Օտուռ, Ալուէն և ուրիշ մի քանի հայ գիւղեր. Տիվրիկն ալ զարհուրեցաւ. քաղաքի և գիւղերի բնակիչները լեռներն ապաստանեցան: Թրքաց խորհուրդն էր մեզ բողոքովն ոչնչացնել, բայց շնորհիւ քաղաքապետին, որ մի բարի մարդ է և համոզու մով հակառակ պալատի արդի քաղաքականութեան, խուժանը չկարողացաւ իր գոփային ծրագիրը իրագործել, հակառակ պալատէն արձակած բացարձակ հրամաններուն: Ժողովուրդը ապահոված իր տեղը վերագարձաւ: Հատերը կուզեն գիւղերէն ցրել, բայց ոչ ոք չի կրնար տեղէն շարժիլ թէ վախէն և թէ կառավարութեան արգելքներէն:

Ալուէն գիւղի մէջ Փալանդացի ջրաղացպան Մինաս Էմին ջրաղացքի անպարն ձգած ու խեղդամահ ըրած են: Քաղաքէն փախչողներէն Հուլանեան Պողոսը, Ճըզեկեան Գասպարը և Թորոս վարժապետի տղան սպանեցան Փուռնձորի մտ. կառավարութիւնը ոչ մի ձեռնարկ չըրաւ չարագործները գտնելու համար:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Շ Ո Ւ Ի Ր Ը

Զորս դար տառ Քրանսացի մեծ կատակեմքաւոր սա տողերը կը գրեն՝ «Թիւրք խելո՞ շունկ՞»--Թիւրքը խի՞ղ՞ ունիմա՞յ: Մուկեթի այս խօսքերը, ոչ տաճիկ ժողովուրդն, սակայն տաճիկական ըտեմի ամբողջ փիլիսոփայութիւնը կամփոփէ եր մէջ: Զորս դար տառ, շորս դար յետոյ ալ Մուկեթի խօսքերը իրենց այժմէութիւնը պիտի ունենան գուցէ: Այն Թրքաստաններ, որոնք կը նկատին Թիւրք կառավարութեան պաշտպանողական ղեք կատարել և խորշին անոր անցեալին վրայ աճեցնել, որովհետեւ այդ անցեալը սուրի և կտրու ուժի զագիւր բռնակարութիւնը եղած է. «զըլմըմըն հագզը մըր» ա՜հ իրենց քաղաքականութիւնը: «Մէշվէրէթ», Թիւրք ազատական օրկանը, ցուցնելու համար, թէ Թիւրքիան ալ մարդկութեան ծառայութիւն մատուցած է, ակամայ կը գրէ, թէ Թիւրքիան կրօնական ներողամտութեան երկիրն եղած է: Ընդհանր է, որ Թիւրքիան հազարաւոր քրիստոնեաներ կուլ չէ տուած, իրա՞ւ է, որ սկզբունքորտ արեւնը անխառն մատուցած է.--պատմութիւնը եւ ղեկողութիւնը հակառակ պիտի ապացուցանեն: Յաւանք է՞, որ 500 տարւան վ թ ի ս ր ի պետութիւն մը այսպէս անվարտի կը ներկայանայ քաղաքակրթութեան ատենին առջեւ: Թիւրք պետութեան պահանջին կողմ պարտաւ է, իսկ պարտին երեսը կը փայլ վայրագութեանց, անօրէնութեանց տեսակներով և իրենց ստորաբաժնուներով:

Մինք իբրեւ հպատակ ժողովուրդ այդ անսիրտ կառավարութեան, ընտանի է մենք աւելի լաւ կը ճանչնանք անոր հոգին ու անոր ձեռնտուները: Մենք մեր ձեռքով կը շօշափէնք այն անբարեկէն քաղ-

կեղծ, որով վարակած էր այդ երկիրը: Երբ Տաճկաստան ըսելով կը հասկցի յըլտըզ, եւ յըլտըզ ըսելով ամբողջ կայսրութիւն մը, երբ յուլթան մը կամ հացկատակ մը այնքան կամայականութիւն ունի երկրին վրայ, որքան ամբողջ ժողովուրդը, երբ զինուորներ կան ազգաբնակչութիւնները հալածելու, կեղեքելու համար, քան երկիրը պաշտպանելու, երբ կըթուլիւն ըսելով կը հասկցի նենգամտութիւն ու դաւաճանութիւն, որուն տխուր մարմնացումն է այսօր համուր, քնական է այդ երկիրն մէջ չեն կրնար ինքնապաշտպանելու հոգիներ, աչնի ձգտումներ ու իղծեր, այլ կը դառնայ զագանական կիրքերու, հակումներու սանձարձակ ստպարէզ: Եւ այդպէս ալ է: Թիւրք կառավարութիւնը մինչեւ այսօր կը նկատէ Տաճկաստանը անազնիւ ազարակ մը, ինք ազարակատէր եւ ժողովուրդը հլու ստորուկ, որ ու է բարոյական իրաւունք չունի խոռվել իր վնասակալին զեշտները...

Եւ դեռ կան անմիտներ, որոնք այսօրինակ կառավարութեան մը ներքեւ կը հաւատան Թիւրքիոյ վերակենցաղման:

Վիեննայի «Նեյ Փրայէ Բրէսէ» կը գրէ՝ «30 տարի առաջ Բարիզի վնասժողովը յուսարով, որ Թիւրքիան կարող է Եւրոպական քաղաքակրթութեան շաւղին մէջ մտնել, Եւրոպական տէրութեանց մէջ մտնուց գայն: Վնասժողովը մեծ սխալ մը գործեց: Թիւրքիան դեռ այն բարբարոս տէրութիւնն է, ինչ որ էր երբեմն: Թիւրքիան արժանի չէ Եւրոպայի պաշտպանութեան եւ թէ ոչ մէկ տէրութիւն յանձն կանէ այդ արեւելակալ կառավարութիւնը պաշտպանելու նախատեղը»:

Այս կարծիքը ընդհանուր է, սակայն դեռ չէ հստակ այն ժամը, ուր արդարութիւնը՝ անպատրաստ ներկայանայ իր անողոր դատաստանով: Մենք կապրինք փոխանցման շրջանի մը մէջ, ուր քաղաքագիտական իտալականներու եւ ընկերային արդարութեան ձգտումն մէջ խուլ մաքառում մը կայ: Գիւսանագիտութիւնը անսխալապէս մեջնիւ դարու անիքաւ, շահամոլ սկզբունքին միջոց բնօրէնող կը նայի տառապող եւ քնաշիշկ եղող ժողովուրդներու վրայ, ան կընդունի թէ հալածանքը, անթութիւնները անբաժան են կեանքի պայքարէն, որով լեռնեայն կուզէ հասկցնել թէ «իրաւունքը միշտ հզօրն է»: Ընկերային բարեշքման հոսանքը կարծես զազուր ղեկանագիտական բեմին, մարդ երբ հոն կը բարձրանայ կը կոպէ կը սիրտը, այդ բեմին վրայ վերջ կը գտնեն հոգիի եւ սրտի ամեն վնասմանութիւն, ամեն թրթռում:

Մենք իրաւունք ունեցինք, երբ մինչեւ այսօր դիւանագիտութեան վրայ լիակատար յոյս չէինք դնել. Ինչլէիօն սկսած, Պիքսիֆիլոս եւ Պիսարը եւ դեռ ուրիշներ կը ղեկավարէին մաթաթիկ շահերով, փառասիրութիւններով: Մարդկութիւնը քաղա ատոնց համար ցնորք է. վազը իրաւունք ունի զգրտել ու եւ կենդանի իր ցոյուրիւնը պահպանելու համար, Պիզմարը ալ իրաւունք ունի ոտնակուն ընել ազգերու իրաւունքը Գիւսանիոյ մեծութեան համար. Քրանսան իրաւունք ունի: Ալաւ Արքէի համար, Գիւսանիայն վրէժ լուծել, բայց հայը իրաւունք չունի իր կողմնուած եղբայրներուն, իր գեղտաբար զոյուրեան վրէժը լուծելու: Եւրոպական վիթխարի պետութիւնները իրաւունք կուտան իրենց բարբարոս թնալնօթները շտկել անմիտներու վրայ, որուն մէջ արդարութեան ամբողջ օրինագիրք մը կը գտնեն, այլ հայը անիրաւ է ծայրայեղ վրէժնադրութեան դիմելով: Թշուառ ամեն տեղ թշուառ է:

Պոլսոյ կեղծ անգամ մ՝ալ դիւանագիտութեան ծակտն գարկաւ սա ծշմարտութիւնը, թէ վտանգաւոր է ազգերու ծակատազին հետ խաղալ: Տարբերութիւնը «կառ կամ ուշ»-ին մէջ է միայն եւ միանգամայն այդ դէպքը, որ դարու ամենէն եզակիս եւ ինքնատիպ եղելութիւնն է Թերեւս, փոքրաբար մը եղաւ ընկերային քաղաքակրթութեան աստիճանին: Եւ մենք կարող ենք ըսել, թէ քաղաքակրթութեան մակարդակը անհուն էլեւէշներ ունի: Բարոյական աշխարհը չէ գտած իր կատարթութիւնը. տխուր քնազներ կան դեռ հոն:

Երբ Անգլիոյ ժողովուրդը զայրոյթի տենդոտ հոսանքէ քննած էր, Քրանսան կը վեր. երբ ազատատէր Զիցերիան իր անկեղծ, մարդասիրական ծայրիկը կը բարձրացնէր, Գիւսանիան եւ Աւստրիան հեգնտա լուծիւն կը պահէին: Երբ հայը յուսահատ ու անհաւատար կռիւ կը մղէր, երբ իր սրբազան հողը կողողէր, իր հարազատ

գաւականներու արիւնով: Ռուսիա, Գերմանիա եւ այլն իրենց հաշակելի ող կը ընկէին, ապազայ ծրագրերնք կը պատրաստէին այդ «բաւոթեան գոհէն» առիծի բաժինը խելու համար: Անոնք թող ծրագրեն:

Մինչև հիմա եւրոպական լրագրութիւնը հայկական հարցի մասին թերուղէի կը գրէ, մասնաւորապէս անգլիական մամուլը սինեական կը Նէկը մնոր: Մենք այդ կարծիքներու թրջոյնն մէջ լոկ-հանդիսատեսներ մը, մեր կուսակցի վրայ ամուր կ'աւարտ. ոչ գովեստները, ոչ պարսպանները կը մոլորեցնեն մեզ մեր սկզբունքէն. մեր քայլերը վճռական են: Մեր դէմ ունինք վայրագ պետութիւն մը, եւ մեր ետեւը մեզի եւ մեմանկ քաղաքակրթութիւն մը, ուրիմս մենք աւելի զօրեղապէս պէտք է կուինք:

Բայց թէ քաղաքագիրք աշխարհի այդ անզգած վիճակը երկար պիտի տեւէ,--որոշ բան մ'ըսէ կարելի չէ. երեւոյթները մեկնութեան տակ չեն իջար. հետազոտութեան Եւրոպայէն դուրս Եւրոպա մ'ալ կայ. անոր ծագող երբ բարձրագոյն կրթայ սարքել գտող իշխանաւորները: Եւրոպական ժողովուրդի ծոցէն մըմուշկներ կ'ակնին բարձրմաս, սպասեց որ անոնք որոտումի փոխախ: Ասգլիոյ ժողովուրդը վերէն վար իր բարկութեան շանթերը կարծակէ Մեծ-Մարդաստանի դէմ, բայց քաղաքական ժարմիքը ձեռնարկ կը մեայ եւ իոյս կուտայ ամեն գահավէժ եւ շեղող ձեռնարկէ: Ռուսալէի հայկական հարցի լուծման համար մեթոփիկներէն խօսքէ աւելի զոգծուական միջոց կը խնդրէ: Հայկական կեանքոտ հարցը առիթ եղաւ Ազատական Նախկին պետին հրատարակ իր պատշտմէն: Դուկ Սաւաքի իր քարտուղարին ընդունով կը յայտարարէր, թէ Եւրոպայի համակրելով մէկ տեղ իր ժողովուրդին վարդապետական շարժման, շտապաբարձր միջոցներու որոշումներէն. քոլի տակէ հասկցնել կուգէ, Բաւազար խօսքը շրջելով, թէ "a raison a des raisons que le cœur ne connait pas":

Պատմական այդ ընդոր ցոյցերէն, լրագրական աղմուկներէն դուրս իրողութիւն մը կը տեսնենք, թիւրքիոյ տնտեսական ու քաղաքական քայքայումը ու երկրին անիշխանական վիճակը: Սուլթանը եւ իր հացակատակները որ առաջ ընդունին բռնեկին կը յայնն. որն հոգ, թէ ինչ վտանգ կ'ապահայ երկրին, թէ ժողովուրդները զիրար կը յօշոտան, թէ դժոխային բոցեր կը լազեն երկրին կենսականութիւնը:

Որքան կը վատթարմայ երկիրը, որքան գահավէժումը կը մօտենայ, կառավարութիւնը պիտի կը ինքնագնէ այդ արեւելի վայրկեանը, մասնատակամներուն եւ քրիստոնեաներուն միջեւ բացւած վիճակը աւելի խորակեցնելով: Այդ անդունդէն պիտի թաւալի այն արեւելի հեղեղը, որ սուլթանի սեւ հոգիին սեւ իղէանը է այս րուսէին:

Ամենէն վայրենի կառավարութիւնն իսկ, այսօրինակ ծգնաժամի մէջ պիտի դիմէր սիրաշահ քաղաքականութեան, աւելի խոհեմ եւ իմաստուն շրջապատութիւն պիտի ունենար. թիւրք կառավարութիւնը չունի այդ առաքելութիւնն եւ ամեն կերպով կաշխատի իր ժողովուրդին մոլեռանդութիւնը վառ պահել: Վերջերս որոշեց մասնատակամներէն մարդաբուխ 5 դահեկան առնել, ըսելով թէ քրիստոնեաները զինած են իսլամութեան դէմ, ուստի հարկէ: Օսմանեան բանակը անբացնել. իսկ վալիներուն հրաման դրկած է, որպէսզի ամենամարդկութիւն միջոցներով քրիստոնեաներէն հաւաքեն հարկերը:

Ելեւմտական տազնապը երկրին ծուծը մտած է: Կառավարութիւնը այժմ գողութեան ելք է եւ ամամեթ գողութեան: Հայ հարուստներէն ընկի ինող շրթնէ սկսեք է:

Սուլթանը, այդ դիւային մարմնացումը, կը յուսար թէ ցարի Եւրոպա այցելութիւնը ամուր պիտի մնար արեւելեան հարցի մասին: Հիմա՛ որ համաձայնութեան մը աղօտ կասկածը պաշարեր է իր խելագար միտքը, ինքնացիք է իր «ամասման քարտուղարութեան» սպառնոյցը տալ քարտուղարներու ծրագրի մը պատրաստելով, եւ հաստատ խօսք տակը Նեկնովին, թէ այլեւս վճռած է պահանջւած քարտուղարները գործառնել: Մենք գիտենք, թէ սուլթանի սովորական խաղերն են ամսոր, միշտն որ քաղաքական հորձանք, որ երկիրը կազմէ առայժմ, պարզել. կը տեսնեն, որ իր կասկածները անհիմն են, Եւրոպան միտում չունի ո եւ է վճարական քայլ առնել, այն ստեղծ երթաք քարով քարտուղարութեան եւ ծրագրի:

Մինչ այս մինչ այն, միւս կողմէն այդ քարտուղարութեան ծրագրին հետ ուրիշ մ'ալ կը պատրաստուի, ամբողջ իսլամ ժողովուրդը զինելու ծրագրերը. ծայրայեղ դէպքին միեռանդ խուժանը միասնաւորող հանելու եւ ճակատագրական կռիւ մղելու քրիստոնեութեան դէմ: Դեպքանները ազուր բողոք տուած են: Բողոք, միշտ բողոք:

Նեկնովին սուլթանին պնդեր է քարտուղարութեան ծրագրի մասին: Խալիֆան խիստ կատարած դեպքանին բռնած լեզուէ, մէջ է ընդիմ ժողովուրդի մոլեռանդութիւնը եւ իր գահուն վրայնգը: Դեպքանը պահանջեր է զինքը պայմանով, որ Տարտանէլը բանայ մարտնասերուն առջեւ: Սուլթանը զայրացած քաշեր է հարեմանոց, իր յալտնական երանութեան վայրը . . .

Պուլոյ թիւրք մամուլը սամաթրակ կը յարձակի հայոց վրայ եւ բաց է ի բաց կը զրգոնէ իսլամ գեհնիկ խուժանը: Գրաքննութիւնը ամեն թղյուտութիւն կընէ ուզածին գրելու. հայ մամուլը պէտք է լռէ սակայն: Թիւրք գետնաքարը մամուլը կ'անուամէ հայերը «քաղաքակրթութեան եւ մարդկութեան թշնամի»: Խորթ-է-թիւր այդ քառերը Թիւրք լրագրութեան ընդին մէջ: Օսմանեան գրականութիւնը մեծ քայլ մ'առած ըլլալու է այդ օրէն վեր:

Մենք վրէժ կը գտանք, Եւրոպան հայոց զոհերու թիւը կարծանազոնէ պաղարկեցնութեամբ, խղճամիտ մամուլը արդարութիւն կառաջակէ եւ սուլթանն է միայն, որ կը գործէ . . .

Երբ աշխարհը սոսկումով մամուլած է, Հայաստանի ծոցէն շոր խժոճութեան գուժերու արծազանցը կը թռչի Եւրոպա Ռինկեան, Ան, Ջմառա եւայլն կրակի մէջ են եւ հայութիւնը քնաշինը ու հալածական:

Ու այս արեւելի տոսմին վերջ կուտայ արեւելի վրէժեղորութիւնը միայն: Սուլթանը թող բմասմ ծրագրերնք ձեւէ, Եւրոպան թող ն երկալ վիճակը պահպանել շահայ եւ աշք գոցէ համայն ազգի մը քստմեկ Նահատակութեան:

Մենք անողոք կը մանք սակայն... կամ սուլթ. կանաւարութիւնը կամ մերմարդկային իրաւունքները: Եթէ հարկէ վրէժագող հայութեան թափը զսպնէ, սուլթանի մը զուրի նետելու է անոր անջել: Եւ իրաւունք ունինք:

Տ Պ Ա Ի Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ի

13/25-ին օգոստոս 96 թ.

Օգոստոս 13-ն է. առաւօտեան ժամ 11-ը: Ես ընկերոջս մօտ եմ, այնտեղ կան և ուրիշ ընկերներ: Մեր խօսակցութեան նիւթը վաղան օրն է: Բացի խօսելուց և գործում ենք: Զղային, շտապողական և տնդոտ գործունէութիւն. ապագրում և պատրաստում ենք պրօկլամացիաները: Վաղը մի ճակատագրական և հանդիսաւոր օր է հայ յեղափոխականների համար. վճռել ենք մի սարսափելի հարած հասցնել մեր բռնակալի խախուտ լէժիմին և մի կրակոյ ապտակ անսիրտ դիպլոմատիային:

Այդ միջոցին ներս է մտնում Աշոտը և մեզ հրաւիրում ներկայ լինել բանկի վրայ յարձակող խմբապետների ժողովին: Գնում ենք, ճամբին հազար ու մի տեսակ մտքեր են անցնում գլխուժու: Առաջին անգամ է, որ մի այդպիսի յանդուգն և մեծ քայլ ենք անելու: Գործի յաջողութեան մասին ունեցած կասկածը կրճատում է մեր սիրտը: Չենք կարողանում բոլորովին

հաւատաւ, որ ստրուկ հայ գիւղացին ընդունակ լինի իրագործել մեր յանդուգն ծրագիրը, նոյն իսկ կասկածում ենք, որ մեր գաղտնիքը ժամանակից առաջ կը յայտնուի:

Գործի պատասխանատուութիւնը իր ահագին ծանրութեամբ ճնշում է մեզ, սեղմում մեր ուղիղը և ճնշում մեր կուրծքը:

Վերջապէս հասնում ենք մի մեծ տուն: Մի գրեթէ ալեւոր, չորչոր, բարձրահասակ, խորշումած դէմքով մշեցի դիմաւորում է մեզ՝ խորհրդաւոր ժպիտը երեսին: Նա սուս ու փուս առաջնորդում է մեզ դէպի վեր. մենք բարձրանում ենք ոլոր մոլոր սանդուխքներով, անցնում ենք խաւարամած և մուայլ միջանցքներով. սիրտս տակն ու վրայ է լինում, կարծես սրբազան տաճար մտնելիս լինինք:

Վերջապէս մտնում ենք մի սենեակ, խորհրդաւոր խաւարը թագաւորում է և այստեղ զգուշութեան համար լուսամուտները գրեթէ բոլորովին ծածկւած են. յատակի վրայ նստոտած տասի չափ հայ յեղափոխականները հրճւանքով ընդունում են մեզ: Այստեղ է և անմոռանալի Բարկէնը, նա իր սոջորական անուշ ժպիտը երեսին սեղմում է մեր ձեռքը: Արդեօք Բարկէնը այդ ժպիտը երեսին մտաւ...

Սկսում ենք խօսել. ես ուշադրութեամբ դիտում եմ այն ընկերներին, որոնք վաղը մի հերոսական գործ են կատարելու: Գրանցից մի քանիսը վճռողական և խորիստ դէմքեր ունին, միւսները սովորական մարդկանց սպաւորութիւնն են թողնում:

Մենք կարելի եղածին չափ բացատրում ենք վաղւան կատարելիք գործի վեհութիւնը, նրա բոլոր դժուարութիւնները և խրախուսում նրանց:

Մի քանիսը ոգևորւում են, նրանք հասկացել են բանի էութիւնը, ատամները կրճատցնում են, աչքերը ուրախութիւնից կրակին են տալիս: Նրանց բոցավառ աչքերում փայլում է վրիժու բոցը. սակայն սովորական երևցած մարդոց դէմքերը բոլորովին չեն փոխուել: Այդ մեզ վրայ շատ վատ է ազդում:

Սէս ուրախ, կէս տրտում դուրս ենք գալիս այդ մուայլ բնակարանից, ուր մեր ամենամեծ և ամեններով փայտայած գաղտնիքը յայտնեցինք մի տասնեակ մարդկանց: Արդեօք այդ մարդիկը պիտի կարողանան իրենց վրայ առած ծանր խաղը մինչև Գողգոթա հասցնել, ասաց այն միտքը, որ սաստիկ տանջում էր մեզ:

Նոյն գիշերը ժողով ունինք Բերայի, Ղալաթայի և լսանկի գործերը ղեկավարողների հետ:

Մութ երեկոյ է. երկու ընկերով գնում ենք Բերայի նեղ-նեղ փողոցներով, երկուսս էլ մտայոյլ ենք և բոլորովին խօսելու տրամադրութիւն չունինք: Երկար գնալուց յետոյ՝ վերջապէս հասնում ենք մեզ ծանօթ և սիրելի տունը: Ա՛հ, ինչքեր չեն կատարւել այդ տանը: Ամեն մի հայի համար այդ տունը տաճար պիտի

լինի, իսկ նրա տիրուհին՝ մի պաշտելի արարած:

Այդ տան պատերի մէջ են կազմւել հայ յեղափոխականների ամենասարսափելի ծրագիրները: Այդ տան յարկի տակ հայի ստրուկ զաւակը շանթեր է արձակել բռնութեան դէմ, այնտեղ նա ուխտել է վրէժ լուծել բռնակալ և արիւնախում սուլթանից: Հայ երիտասարդներ, այդ տան մէջ է արել իր կտակը անմահ Բարկէնը...

Դուռը ծծծում ենք՝ բացւում է և երևում է մեր պահապան հրեշտակի, մեր պաշտելի հայ քրոջ սեահեր գլուխը: Լուռ կերպով նա ողջունում է և ճրագը ձեռքին լուռ ու մունջ առաջնորդում է մեզ ծանօթ սենեակը:

Սենեակի այս ու այն անկիւնում նստել են մեր ընկերները. բոլորի դէմքն էլ մի արտասովոր լռութեան դրոշմ է կրում: Նոյն իսկ միշտ ծիծաղկոտ ու զւարճախօս Բարկէնն էլ լուրջ է այս գիշեր. նրա յօնքերը մի փոքր կիտւած են և ճերմակ ճակատը փոքր ինչ ամպամած: Նա երբեմն աշխատում է ժպտալ և հանաք անել, բայց այդ նրան չէ աջողում: Ըստ երեւոյթին՝ առաջիկայ ճակատագրական օրն ամենքի վրայ էլ ազդում է և կարծես ամենքն էլ իրենց մտքերում ընկղմւած՝ ուղում են կեանքի հետ իրենց հաշիւները մաքրել...

Սկսում ենք խօսել: Մեր խօսակցութիւնը շատ լուրջ է. Բարկէնը պարզում է, թէ ինչպէս պէտք է յարձակւեն բանկի վրայ, որ յաջողութիւնը կատարեալ լինի. նա բոլորովին վստահ կերպով յայտնում է, որ եթէ իր ուզած կերպով կատարեն, գործը կը յաջողի: Գրեթէ բոլորս էլ համաձայնւում ենք նրա հետ:

Վերջապէս Բարկէն, Հրաչ, Գարօ և Աշոտ ստորագրում են բանկից ուղարկելիք պահանջների տակը: Այդ միջոցին բաւական ուրախանում ենք. ասում ենք, որ այդ թուղթը պատմական գօկումենտ պիտի լինի, մեծ դեր պիտի խաղայ հայ ազգի կեանքի վերաբերմամբ: Վերջապէս գործերը վերջացնելուց յետոյ՝ ուրախ և զւարթ սկսում ենք ընթրել: Չմոռնամ՝ ասել, որ այդ օրը Բարկէնը շարունակ ասորձանակի, դանակի և ուռմբի հետ էր խաղում, մենք բարկանում էինք վրան և ձեռքիցը խլում:

Հացի վոյս մի շէշ գինի ունինք. խմում ենք իրար կենաց, ամեն մէկս մի քանի տաք ու ոգևորւած խօսքեր ասում, վերջապէս Բարկէնը վերցնում է բաժակը և ամբողջովին զգացմունք դարձած՝ ասում. «Դեռ կերներ, գիտեմ, որ պիտի մեռնինք, սակայն միակ փափագս է, որ ողջ մնացողները աւելի կատաղի կերպով շարունակեն մեր սուրբ գործը, լուծեն մեր հարիւր հազար սրախողկոյ եղած եղբայրներուն ու քոյրերուն վրէժը և ազատեն մեր դժբախտ հայրենիքը. այն ժամանակ մեր ոսկորներն ալ հանգիստ կըլլան»: Երգւում ենք, որ ողջ մնացողը չի դաւաճանիլ մեր սուրբ գործին:

Բողոքս էլ զգածուած և ոգևորուած ենք. նոյն իսկ սկսում ենք բաւական բարձր ձայնով աղատ երգեր երգել:

Վերջապէս շատ ուշ է. պէտք է հանդստանալ. բաժանելու վայրկեանը հասել է: Իրար գրկում և պինդ պինդ համբուրում ենք: Ամենքս էլ մտածում ենք, արդեօք կրկին պիտի կարողանանք իրար տեսնել... Ո՞վ կարող էր հաւատալ, որ վաղը, ուղիղ 11 ժամից յետոյ, մեզնից միմիայն Բաբկէնը պիտի զոհուէր... Ի՛նչ անփոխարինելի զոհ:

Յուզուած և զգածուած տուն եմ վերադառնում և իսկոյն անկողին մտնում: Սակայն քունս չէ տանում. անկողինս կարծես մի բոցավառ խարոյկ լինի. ամբողջ մարմնովս այրում եմ. գլուխս տրաքւում է: Աչքերս փակում և ուզում եմ զօրով քնել, բայց չեմ կարողանում. երևակայութիւնս բորբոքած է: Ահա տեսնում եմ Բանկ-Օտոմանը, նրա վրայ ծածանուած է մի կարմիր դրոշակ, ես ուրախ-ուրախ մտնում եմ դրոշակին, բայց զարհուրում. նրա եզրներից արին է կաթում. իսկ տակը ընկած է գիւլախորով Բաբկէնը, ատրճանակը ձեռքումը պինդ սեղմած: Սարսափած վեր եմ կենում և ճրագը վառում:

Սակայն լոյսն էլ ինձ չէ ազատում այդ երազից: Ո՛հ, դա երազ չէր, այլ մի տեսիլ, հոգու մի գուշակութիւն:

Ես կրկին մօտենում եմ բանկին, փողոցով արեան գետ է հոսում, շուրջս դիակներով լիքն է. նոյն իսկ ոտքերիս տակ են ընկնում: Հեռանում եմ. ի՛նչ եմ տեսնում... Բաբկէն, Հրաչ, Գարօ—արիւնթաթախ, ճխլւած, կտրուած... մազերս փշաքաղում են. ամբողջ մարմնովս դողում եմ: Վերջապէս մի կերպ լուսացնում եմ:

Յ Ե Ղ Ե Վ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե ր

(Ն Ի Ր Ո Պ Ա Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ո Յ)

— Բարդղղիմէսս, ինքնակոչ տեղապահը, երբ կառքով իր ետևէն ալ զինւորներով տուն կը վերադառնար եկեղեցիէն, չորս հոգի յանկարծ վրան յարձակեցան սպաննելու համար. դժբախտաբար չի յաջողեցան և ձերբակալեցան:

— Երկու կորիճ հնչակեաններ Աւետիս Քօրլեանի տունը մտնելով, որ մերժած էր դրամ վճարել, հոն դտնող երկու պահապան ոստիկանները դաշունահար կսպաննեն և կը կծկեն: Կառավարութիւնը 300 ոսկի խոստացած է սպանիչները դատողին: Այժմ իբր թէ ձերբակալած են:

— Թանին կը հեռագրեն, թէ դեսպանները շաբաթ օր Գրան ամենախիստ զեկուցադիր մը յղած են մահմեդականներուն վրայ դրւած նոր աւելատուրքին հա-

մար, որ, ըստ իրենց, ոչ թէ բանակին սպառազինման համար է, այլ իսլամ խուժանին:

Վրուի նաև թէ իմամներուն հրաման դրկած է, որպէս զի հաւատացեալներուն հրաւէր կարդան՝ քրիստոնեաներուն դէմ կազմ ու պատրաստ ըլլալու համար:

— Գերմանական յԼօքալ Անցայկէր—ի Պոլսոյ թղթակիցը կը գրէ՝ յՍուլթանը Վիլհէլմի նկատմամբ տածած բարեկամութիւնը այնքան հեռուն տարած է, որ մինչև իսկ պատրաստականութիւն ցոյց տւած է ո և է վտանգի պահուն Գերմանիոյ կայսեր տրամադրութեան տակ դնել 500,000 կազմ զինւոր:

Հարեմներու բանակը որու տրամադրութեան տակ պիտի դնէ արդեօք: Բարեկամութիւնն ալ սասնկ ըլլալու է:

— Օգոստոս 27-ին Նիւ-Եօքքի մէջ մեծ միթինկ մը գումարւեցաւ հայ տարագիրները Միացեալ Նահանգներու մէջ չընդունւելնուն առթիւ և պահանջեց, որ Վաշինկթօնի կառավարութիւնը բացառիկ աչքով նայի դժբախտ հայոց վրայ:

Նոյնպէս որոշեց, որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը աշխատի տէրութեանց մէջ համաձայնութիւն գոյացնել Թիւրքիոյ կոտորածներուն վերջ դնելու համար:

Վլատսթօն հեռագրով իր ուրախութիւնը կը յայտնէ, որ հայ ժողովրդէն թոքը մաս մը կրցած է խուսափիլ Մեծ-Մարդասպանի ճիրաններէն, և կը յայտարարէ թէ կատարած սարսափներու կուտակումը, ուր ուրեմն վերջ պիտի տայ այն անհնարին անօրէնութեան, որ կը կռչի Թիւրքիոյ կայսրութիւն:

— Սելանիկի նահանգին մէջ, Գագիս ապստամբապետի խումբը Քորիցայի մօտ երկար կռիւ մը ունեցաւ թիւրք զինւորներուն հետ: 90 զինւոր սպաննւած են և 8 հոգի ալ դերի բռնւած:

Գագիս առաջարկեր է փոխանակել իր գերիները Մանաստրի մէջ բանտարկւած մակեդոնացի ապստամբ բանտարկեալներուն հետ:

Լոյս է տեսել Հ. Յ. Գաշնակցութեան ծրայիւր արևմտեան բարբառով:

ՆՈՒՐԱՏԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԸ
Ոսկանապատից 1000 բուբ.
Բուլգ. Վարնա քաղաքի յՀայ Ժողովրդային Միութիւնից՝ 288 լև 5 սանտ.
Աշոտ Մանւէլեանից 100 Փր.

Դաշնակցութեան անձամօթնելից ինդրում է թղթակցութեան և նւիրատուութեան համար դիմել.
Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)
Վիեննա, Դաշնակցութեան աղատ սուրբան: